| Հայ առաքելական եկեղեցու Տավուշի թեմ | Կանացի հագուստ (շապիկ, վերնաշապիկ, տաբատ, կիսաշրջազգեստ, բաճկոն) | 8 | տուփ | 126 կգ | 2 900 |
| | Տղամարդու հագուստ (շապիկ, վերնաշապիկ, տաբատ, բաճկոն) | 22 | տուփ | 406 կգ | 11 300 |
| | Մանկական հագուստ | 1 | տուփ | 16 կգ | 300 |
| Ընդամենը՝ | | 202 | տուփ | 3729 կգ | 91 625 ԱՄՆ դոլար |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**13 ապրիլի 2012 թվականի N Մ-254-Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N Մ-153-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 4-ի N 3/3.8-2/4244-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 2-ի N ԱԱ/3-6/2829-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված՝ ստորև նշված բեռները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի մարտի 2-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-153-Ա որոշմամբ (2009 թվականի հոկտեմբերի 9-ի N Մ-704-Ա, 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-704-Ա, 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-059-Ա, 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-523-Ա և 2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-093-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) մարզադաշտերի խոտածածկի մշակման մեքենա (մեկ տեղ, 210 կգ ընդհանուր քաշով, 6446 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1337.88 եվրո, «Զվարթնոց» ՄՏ).

2) մարզադաշտերի խոտածածկի մշակման մեքենայի դանակներ (մեկ տեղ, 269 կգ ընդհանուր քաշով, 7500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1756 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ).



3) մարզադաշտերի լուսատախտակների հոսանքի ղեկավարման վահանակներ (մեկ տեղ, 10 կգ ընդհանուր քաշով, 700 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 200 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 ապրիլի 2012 թվականի N Մ-255-Ա**
**քաղ. Երևան**

### «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՀՈՎԻՏ, ԿՈԹԻ ԵՎ ՈՍԿԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՀՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2012 թվականի մարտի 19-ի N 07/16/1432-12, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի 15-ի N 3/3.8-1/3070-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի մարտի 19-ի N 02/1581-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի 14-ի N ԱԱ/3-4/2105-12 և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2012 թվականի մարտի 20-ի N 01/13.3/1174-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 1489325 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Գետահովիտ, Կոթի և Ոսկևան համայնքների մանկապարտեզների համար կահույքի ձեռքբերում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ջի սթայլ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 90019529) 2012 թվականի մարտի 1-ին կնքված՝ N WVA/ADP TAV/SF-12/001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մանկապարտեզի կահույքի ձեռքբերում՝ 1489325 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:



3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՂԵԿԱՎԱՐ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի տնօրենի ժ/պ Ալեքսանդր Ադամյանի կողմից
10 ապրիլի 2012թ.

«Տավուշի մարզի Գետահովիտ,Կոթի և Ոսկևան համայնքների մանկապարտեզների համար կահույքի ձեռքբերում»

Ծ ր ա գ ի ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագիրը նպատակ է աջակցել Տավուշի մարզի Գետահովիտ,Կոթի և Ոսկևան համայնքներին մանկապարտեզներին ստեղծելու երեխաների համար բարենպաստ պայմաններ՝ տրամադրելով անհրաժեշտ կահույք |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Ծրագիրը ֆինանսավորում է Վորլդ վիժն ԱՄՆ-ի աջակցող գրասենյակի կողմից<br>Հասցե՝ 34834 Weyerhaeuser Way So. Federal Way, WA 9800[illegible] [illegible]-511-6548 www.worldvision.org |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջա[illegible] կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>Հասցե՝ ք. Երևան, Ռ. [illegible] 1 [illegible] ՀՎՀՀ [illegible]8755 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ [illegible] Տավու[illegible] [illegible]հովիտ, Կոթի և Ոսկևան համայնքներ:<br>Բնագավառը՝ սոցիալակա[illegible] |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեք[illegible] [illegible]ամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործությունը ստացող [illegible] Տավու[illegible] Գետահովիտ, Կոթի և Ոսկևան համայնքները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 20 Հունվար – 14 Ապրիլ 2012թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | |

| Միջոցառումների նկարագրությունը | Ժամկետները | Անհրաժեշտ ֆինանսական միջոցները |
|---|---|---|
| Բաց մրցույթի անցկացում՝ ներկայացված նախագծա-նախահաշվային փաստաթղթերի հիման վրա գույքի/կահույքի մատակարարում իրականացնող կազմակերպություն ընտրելու նպատակով | Հունվար - Փետրվար 2012թ. | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| Տավուշի մարզի Գետահովիտ,Կոթի և Ոսկևան համայնքների մանկապարտեզների համար գույքի մատակարարում | Փետրվար-Ապրիլ 2012թ. | 1 489 325 դրամ |



| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Տավուշի մարզի Գետահովիտ,Կոթի և Ոսկևան համայնքների մանկապարտեզների համար ձեռք է բերվելու կահույք, որի մատակարարը կլինի «Ջի Սթայլ» ՍՊԸ-ն:<br>Նախատեսված կահույքը պատրաստվելու է լամինատից և փայտից:<br>Տավուշի մարզի Գետահովիտ, Կոթի և Ոսկևան համայնքների մանկապարտեզների կահավորման համար նախատեսված է 1 489 325 դրամ, որի նախահաշիվը կցված է մատակարարի հետ կնքված պայմանագրին: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է Տավուշի մարզի Գետահովիտ, Կոթի և Ոսկևան համայնքների հետ համագործակցությամբ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

«Վորլդ վիժն ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Տավուշի Տարածքային Զարգացման Ծրագրի ղեկավար

Ռ. Հակոբյան

«Տավուշի մարզի Գետահովիտ,Կոթի և Ոսկևան համայնքների մանկապարտեզների համար կահույքի ձեռքբերում» ծրագրի շրջանակներում կահույքի ցուցակ

21.5/4

*Գետահովիտ համայնքի մանկապարտեզի կահույքի ցուցակ*

| | Անվանումը | քանակը | միավորի գինը | ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1 | Մանկական մահճակալի ներքնակ սինտիպոնե, երեսի կտորը մանկական նախշերով/60*12*135 | 20 | 9000 | 180000 |
| 2 | Աթոռ մանկական հաճարի փայտից նստատեղը լամինատե /տարբեր մանկական գույներով/32*30*60 | 20 | 4000 | 80000 |
| 3 | Մահճակալ մանկական առանց ներքնակի 604x1400 մմ | 20 | 14750 | 295000 |
| 4 | Մանկական զգեստապահարան լամինատե 5 դռներով կապույտ, մանուշակագույն և վարդագույն/200*150*40 | 2 | 56500 | 113000 |
| | Ընդամենը | | | 668000 |

*Կոթի համայնքի մանկապարտեզի կահույքի ցուցակ*

| N | Անվանումը | քանակը | միավորի գինը | ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1 | Սննդի պահարան ներսում 2 պոլկաներ 1000x2004x600 մմ /երկու կտորից 970x1000x560 մմ, 2 հատ | 1 | 72500 | 72500 |
| 2 | Սեղան խոհանոցի 700x1200x720 մմ, երեսը 18մմ | 1 | 20825 | 20825 |
| 3 | Երկտեղանի լվացարանով պահարան, 600*800*850 մմ | 1 | 45000 | 45000 |
| 4 | Աթոռ մեծ,չորացրած հաճարի փայտից, կտորը և սպունգը բարձրորակ | 6 | 8250 | 49500 |
| 5 | Խոհանոցի ափսեների պահարան 600*1100*1200 մմ | 1 | 50000 | 50000 |
| 6 | Սեղան մանկական երեսը լամինատից | 10 | 14000 | 140000 |
| | Ընդամենը | | | 377825 |

*Ոսկևան համայնքի մանկապարտեզի կահույքի ցուցակ*

| N | Անվանումը | քանակը | միավորի գինը | ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1 | Սեղան մանկական | 15 | 14000 | 210000 |
| 2 | Աթոռ մանկական 320*300*600 մմ | 25 | 4000 | 100000 |
| 3 | Խաղալիքների պահարան /1200*1000*400մմ | 2 | 20000 | 40000 |
| 4 | Գրասեղան 600x1200x730 մմ | 2 | 22000 | 44000 |
| 5 | Աթոռ մեծ | 6 | 8250 | 49500 |
| | Ընդամենը | | | **443500** |

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 1489325 դրամ

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Տավուշի Տարածքային Զարգացման Ծրագրի ղեկավար

Ռոբերտ Հակոբյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 ապրիլի 2012 թվականի N Մ-256-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 6-ի N 3/3.8-2/4417-12, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2012 թվականի ապրիլի 10-ի N 1/06/283-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 6-ի N ԱԱ/3-6/3007-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդերացիայի (FIFA) կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված գրասենյակային պարագաների և մարզագույքի (մեկ տեղ, 139 կգ ընդհանուր քաշով, 704 շվեյցարական ֆրանկին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1070.30 շվեյցարական ֆրանկ, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**13 ապրիլի 2012 թվականի N Մ-257-Ա**
**քաղ. Երևան**

## ԱՄՆ-ի ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 16-ի N 3/3.8-2/4954-12 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 11-ի N ԱԱ/3-6/3100-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից (ԱՄՆ, Գլենդել, Փասիֆիք պողոտա, N 1101) իր հայաստանյան ներկայացուցչության միջոցով (ՀՀ, քաղ. Երևան, Ալեք Մանուկյան 9, սենյակ 204, ՀՎՀՀ՝ 01574053) իրականացվող՝ 780301.89 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ «Մարդասիրական օգնություն Հայաստանին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից՝ իր հայաստանյան ներկայացուցչության հասցեով ուղարկված բեռը (199 տեղ, 8908 կգ ընդհանուր քաշով, 770651.89 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 8150 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան
ներկայացուցչության տնօրեն Արմեն Գյուլխասյանի կողմից

«3» ապրիլի 2012

## Մարդասիրական օգնություն Հայաստանին

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից դոնորներից ստացված մարդասիրական օգնության հավաքագրում, առաքում Հայաստան, ստացում և համապատասխան ձևակերպումների իրականացում ու բաշխում շահառու կազմակերպություններին: Մարդասիրական օգնության նպատակներն ըստ կազմակերպությունների նկարագրված են կից ներկայացված շահառուների բաշխման ցանկում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններ |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամ (1101 Ն. Փասիֆիք պողոտա, Գլենդել, Կալիֆորնիա 91202) և ըստ կից ցանկի |
| 4. | Ծրագիրը կատարողը | ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամը՝ հայաստանյան ներկայացուցչության միջոցով (քաղ. Երևան, Ալեք Մանուկյան 9, սենյակ 204, ՀՎՀՀ՝ 01574053): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, ԼՂՀ՝ սոցիալական, կրթության, առողջապահության, մշակույթի, գյուղատնտեսության ոլորտներ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 780,301.89 ԱՄՆ դոլար |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ստացող կազմակերպությունների ցանկը ներկայացվում է կից հավելվածով: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2012 թվականի ապրիլի 4-ից մինչև հունիսի 30-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետներ, | Բեռների ստացում, մաքսային ձևակերպում և բաշխում շահառու կազմակերպություններին 2012 թվականի ապրիլի 4-ից մինչև հունիսի 30-ը |

| | | |
|---|---|---|
| | անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 780,301.89 ԱՄՆ դոլար |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ներմուծվող ապրանքների ցանկը ներկայացվում է կից հավելվածով՝<br>8908 կիլոգրամ քեռ<br>**770,651.89** ԱՄՆ դոլար արժեքով<br>Տեղափոխում՝ 8,150.00 ԱՄՆ դոլար |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Աբովյանի մաքսային պահեստի ծախսեր՝ 1500.00 ԱՄՆ դոլար, |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Չի նախատեսվում: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Պարբերաբար հաշվետվություններ են ներկայացվելու ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամին և օրենքով սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

4.5/23

ՄՀՀ ԲԵՌ 237
Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչություն
Ալեք Մանուկյան 9, 2-րդ հարկ
Երևան, 0070 Հայաստան
Հեռ.՝ 10-51-20-50
Բջջ.՝ 91-42-51-21
Պատասխանատու՝ Արմեն Գյուլխասյան

Մարդասիրական օգնություն Հայաստանին

| ՍՏԱՑՈՂ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ԴՈՆՈՐ | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅ ՈՒՆ | ԿՈԴ | ԱՐԿՂ | ՊԱԼԵ S /SKID S | ՔԱՇ կգ | ԱՐԺԵՔ $ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բժիշկ Ավագյան Մեղրակ - Ոսկրածուծի դոնորների | Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստր բարեգործական | Բեռները հատկացվում են հիմնադրամին շահույթ | Բեռի ստացման իրական շահառուն է Ոսկրածուծի դոնորների հայկական | Բժիշկ Ջորդան Ֆրիեդա (Կալիֆորնիա) | Բժշկական պարագաներ | SC 237-16 | 3 | | 45.363 | 32,015.00 |
| | | | | | | SC 237-32 | 1 | | 9.9799 | 3,500.00 |
| Ավետիսյան Կարեն, Հայաստանում ԼՂՀ ներկայացուցչությունը | ՀՀ-ում ԼՂՀ Մշտական Ներկայացուցչություն, Երևան, Ն. Զարյան 17ա, ՀՎՀՀ 01538293 | Բարեգործական, ուղղարկվում է ԼՂՀ սոցապնախարարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, ինչից հետո հանձնաժողովը բաշխում է բեռը շահառուներին | Բարեգործական, ուղղարկվում է ԼՂՀ սոցապնախարարությանբարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, ինչից հետո հանձնաժողովը բաշխում է բեռը շահառուներին | Միացյալ հայկական հիմնադրամ | Դեղորայք | NKR SC 237-34 | | 1 | 176.92 | 100,583.50 |
| Ղազարյան Աշոտ, Հայկական Համընդհանուր Բարեգործական Միություն | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Հայաստանի ներկայացուցչություն, Հասցե՝ Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ 00006479 | Բարեգործական | Բեռը նվիրաբերվելու է Երևանի պետական բժշկական համալսարանին, | Հայկական Համընդհանուր Բարեգործական Միություն | Բժշկական սարքեր | SC 237-11 | | 1 | 308.47 | 16,450.00 |
| Օերդեկյան Օհաննես - Հայկական Համընդհանուր Բարեգործական Միություն | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Հայաստանի ներկայացուցչություն, Հասցե՝ Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ 00006479 | Բարեգործական | Բեռը տրամադրվելու է Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստրին: Այն առաքվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 23 դեկտեմբերի 2011թ. ՆՄ-1133-Ա որոշմամբ բարեգործական որակված ծրագրի շրջանակում: | Բժիշկ Ջորդան Ֆրիեդա (Կալիֆորնիա) | Բժշկական պարագաներ | SC 237-39 | 1 | | 17.692 | 2,411.96 |
| Հակոբյան Հ.Հայ-ամերիկյան առողջության կենտրոն | Հայ-Ամերիկյան Առողջության Կենտրոն հիմնադրամ ՀՀ ք. Երևան, Մ. Հերացու 5, ՀՎՀՀ | Բեռը պարունակում է լաբորատոր ներկեր, որն օգտագործվելու է ՀԱԱԿ-ի լաբորատորիայում | Բեռի ստացման իրական շահառուն "Հայ Ամերիկյան Առողջության Կենտրոն" հիմնադրամն է: | Հայ-ամերիկյան մշակութային ասոցացիա | Կրթական ամսագրեր | SC 237-12 | 3 | | 81.654 | 1,516.50 |
| | | | | | Գրքեր | SC 237-29 | 1 | | 14.516 | 1,140.00 |
| Հարությունյան Մ, Մեծն Ներսես բարեգործական կազմակերպություն | <Մեծն Ներսես> Բարեգործական Հասարակական Կազմակերպություն, Երևան Կորյունի 6ա, բն,1, ՀՎՀՀ 01513853 | Նպատակը՝ անհատույց փոխանցել Հայաստանի Ազգային գրադարանին, վերջինիս կողմից գրադարանային անվճար ծառայություններ մատուցելու, ընթերցողների . | Աթոռ Սուրբ Էջմիածին և Հայաստանի Ազգային գրադարան, նվիրատվությունը կհամալրի Հայաստանի Ազգային գրադարանի ֆոնդերը | | | SC 237-01 | 9 | | 116.13 | 4,400.00 |
| | | | | Արևելյան թեմ | Գրքեր | SC 237-02 | 9 | | 106.15 | 3,600.00 |

| ՍՏԱՑՈՂ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ԴՈՆՈՐ | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ԿՈԴ | ԱՐԿՂ | ՊԱԼԵՏՍ /SKIDS | ՔԱՇ կգ | ԱՐԺԵՔ $ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հեկեկյան, Հայ փոքրիկ երգիչներ | <<Հայ Փոքրիկ Երգիչներ>> միջազգային ասոցիացիա: Քաղաք Երևան, Կիևյան 26-39, ՀՎՀՀ 00009658 | Բեռն օգտագործվելու է բացառապես բարեգործական նպատակով: Հատկացվելու է տարբեր մշակութային կազմակերպություններին, անհատներին և հանրակրթական դպրոցներին: | Խտասալիկները անվճար կտրամադրվեն անվանի երաժիշտներին, երաժշտական ուսումնական հաստատություններին, գրադարաններին, երգչախմբերին, մշակութային ՊՈԱԿ-ներին, երկիր ժամանած պատվավոր հյուրերին: | Հայկական մշակութային հիմնադրամ | Սկավառակներ | SC 237-13 | 11 | | 97.078 | 1,650.00 |
| Հովսեփյան Վարդգես, ՀՀ արտաքին գործերի նախարարություն | ՀՀ արտաքին գործերի աշխատակիցներ և բեռը ստանում են որպես անհատներ և ոչ թե որպես կազմակերպություն: Պրոցեսը հեշտացնելու նպատակով ընտրվել է մեկ միասնական հասցե` ԱԳՆ | 2011 թ. ԱՄՆ Թաֆթս համալսարանի Ֆլեթչերի իրավունքի և դիվանագիտությանդպրոցում սովորելու ընթացքում տրամադրվել են դասագրքեր, որոնք այժմ ուղարկվում են շրջանավարտներին ուսումը շարունակելու համար: | Բեռի ստացման իրական շահառուն ԱԳՆ աշխատակիցներն են և նախատեսվում է բեռը տրամադրել նրանց ուսումնական նպատակով: | Ֆլեթչեր դպրոց - Թաֆթս համալսարան | Դասագրքեր | SC 237-28 | 16 | | 276.26 | 12,250.00 |
| Կոլոյան Կարեն - Երեխաների վերածնունդ | Երեխաների Վերածնունդ, Վ.Վաղարշյան 24/3, բն 3, ՀՎՀՀ 00069638 | Բժշկական սարքավորումներ և նյութեր, որոնք օգտագործվում են հիմնականում« Արաբկիր բժշկական կենտրոնում: | Արաբկիր բժշկական կենտրոն երեխաների անվճար բուժման նպատակով | Բժիշկ Գուդուզյան Նիշան | Բժշկական պարագաներ | SC 237-27 | [illegible] | | 147.43 | 5,070.00 |
| ՀՀ առողջապահության նախարարություն, Քուշկյան Հարություն | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության <<Մարդասիրականօգնության հանրապետականկենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպություն, Գտնվելու վայրը - ք. Երևան, Նոր-Արեշ 35 | ըստ ՀՀ կառավարությանթիվ 1432-Ն առ 14.10.2004թ.որոշմամբ հաստատված կարգի: | ըստ ՀՀ կառավարությանթիվ 1432-Ն առ 14.10.2004թ.որոշմամբ հաստատված կարգի: | Միացյալ հայկական հիմնադրամ | Դեղորայք Ուլտրամ | SC 237-20 | 2 | | 9.9799 | 36,627.50 |
| | | | | | Բժշկական | SC 237-21 | | 1 | 37.198 | 5,688.00 |
| | | | | | Դեղորայք Լամոտրիգին | SC 237-22 | 2 | | 18.145 | 166,384.00 |
| | | | | | Բժշկական պարագաներ | SC 237-23 | | 9 | 2526.7 | 186,868.39 |
| | | | | | Դեղորայք | SC 237-33 | | 1 | 122.48 | 77,807.00 |
| Ներսեսյան Հարութ - Ամերիկայի հայկական միսիոներական ասոցիացիա | Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ, Հասցե` ք. Երևան, Նիկոլ Դուման 22, ՀՎՀՀ – 00032803 | Բարեգործական | Շահառուները – բժշկական պարագաները տրամադրվելու են կազմակերպությանը պատկանող Սպիտակի և Վանաձորի բժշկական կենտրոններին, որոնք անվճար ծառայություններ են մատուցում: | Բժիշտ Ֆիլիպ Ալբերտ (Կալիֆորնիա) | Բժշկական պարագաներ | SC 237-26 | 10 | | 151.06 | 4,000.00 |
| Օրդյան Անահիտ, ՀԱՀ | Հայաստանի ամերիկյան համալսարանհիմնադրամ, Հասցե` ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող.40, ՀՎՀՀ 01511187, | Նվիրատվությունուսանողությանև հանրության օգտագործման նպատակով | Նվիրատվությունուսանողությանև հանրության օգտագործման նպատակով | Հայաստանի ամերիկյան համալսարան | Գրքեր | SC 237-08 | 59 | | 739.42 | 12,500.00 |
| | | | | | Համակարգչային պարագաներ և գրքեր | SC 237-09 | 2 | | 38.105 | 257.92 |
| | | | | | Փաստաթղթապանակ | SC 237-24 | | 1 | 215.93 | 1,510.00 |

| ՍՏԱՑՈՂ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ԴՈՆՈՐ | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ԿՈԴ | ԱՐԿՂ | ՊԱԼԵՏՍ /SKIDS | ՔԱՇ կգ | ԱՐԺԵՔ $ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Պողոսյան Արմեն - Հայաստան համահայկական հիմնադրամ | Հայաստան Համահայկական հիմնադրամ, Իրավաբանական հասցե` ՀՀ, Կառավարության 3-րդ շենք, գործունեության հասցե` Բաղրամյան 26, ՀՎՀՀ` 02507456 | Բարեգործական | Բեռները տրամադրվելու են թանգարաններին, Համաճարակային կենտրոնին, "Մեր Հույս" կազմակերպությանը | Հայաստան հիմնադրամ, ԱՄՆ | Համակարգիչներ | SC 237-06 | 6 | | 93.902 | 8,000.00 |
| | | | Տրամադրվելու է Բժշկական համալսարանին | | Բժշկական գործիքներ | SC 237-07 | 2 | | 37.198 | 22,230.00 |
| | | | | | | | | | | |
| Մարգսյան Բագրատ, ՀՕՖ | Անվանումը- Ամերիկայի հայ օգնության ֆոնդ, Հայաստանի մասնաճյուղ<br><br>Հասցեն- ք. Երևան 0010, Խորենացի 22<br><br>ՀՎՀՀ - 02517115 | Նպատակը` բարեգործական նվիրաբերություն սոցիալապես անապահով խավին (հատուկ դպրոցներ, մանկատներ, աղետի գոտի, շրջանային բուժհաստատություններ և այլն) | հանրագիտարան"Britanica" Կայան Ավանի Հինթյան դպրոցի համար | Հայ Օգնության Ֆոնդ | Գրքեր | SC 237-03 | 2 | | 59.88 | 660.00 |
| | | | դպրոցական պարագաներ, հագուստ թիվ 11 հատուկ դպրոցի համար | | Հագուստ և դպրոցական պարագաներ | SC 237-04 | 11 | | 96.17 | 2,009.00 |
| | | | համակարգիչներ և տեխնիկա Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն հիմնադրամի համար, Ջութակ` Գյումրու Օկտետ երաժշտական դպրոցի համար | | Համակարգչային պարագաներ և ջութակ | SC 237-05 | 3 | | 30.847 | 1,610.00 |
| | | | Կավե պարագաները` Հայկական ճամբար բարեգործական ՀԿ համար | | Կավի պարագաներ | SC 237-25 | | 1 | 136.09 | 3,500.00 |
| | | | բժշկական պարագաներ ՀՕՖ-ի Շարունակական բժշկական կրթություն ծրագրով նախատեսված բուժաշխատակազմ | Ասադորիան Ջորջ | Բժշկական սարքեր | SC 237-31 | | 2 | 660.04 | 9,650.00 |
| Մարտիրոսյան Ռաֆիկ, ՀՕՖ | | | Ապրանքների տրամադրումը նախատեսում է երեխաների, ուսանողների սոցիալական կարիքների բավարարում | BAFA կազմակերպություն | Հագուստ և վերմակներ | SC 237-17 | | 3 | 646.88 | 15,060.00 |
| Բժիշկ Ստամբոլցյան Գ. Քանաքեռ-Զեյթուն բժշկական կենտրոն | Քանաքեռ Զեյթուն Բժշկական կենտրոն, փակ բաժնետիրական ընկերություն, հասցե` Հ. Ներսիսյան 7, ՀՎՀՀ` 01002597 | Քանաքեռ Զեյթուն Բժշկական կենտրոնի հիվանդներին բարեգործական նպատակներով բաշխելու համար | Բեռը նախատեսված է Քանաքեռ Զեյթուն Բժշկական կենտրոնի հիվանդների համար | Միացյալ հայկական հիմնադրամ | Բժշկական պարագաներ | SC 237-19 | | 1 | 45.817 | 8,532.00 |
| | | | | | | | | | | |

| ՍՏԱՑՈՂ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ԴՈՆՈՐ | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ԿՈԴ | ԱՐԿՂ | ՊԱԼԵՏՍ /SKIDS | ՔԱՇ կգ | ԱՐԺԵՔ $ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տեր Ղազարյան Ռուզան, HDP հիմնադրամ | Հյուման Դիգնիթի ընդ Փիս Բարեգործական Հիմնադրամ (HDP Charitable Foundation), հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Երևան, Հր. Քոչար 14- 45, ՀՎՀՀ՝ 008412 | Կազմակերպությունն իրականացնում է ծրագիր գյուղական համայնքներում գյուղատնտեսականբույսերի մշակության վերաբերյալ: Գյուղացիական համանյքներում ծրագրի շահառուներին անվճար տրամադրում է սերմեր, իրականացնում է ուսուցում, դրանց մշակության և բարձր բերքատվության ստացման թեմաներով: | Բեռի ստացման իրական շահառուներեն են Արարատի և Սյունիքի մարզերում ծրագրի մեջ ընդգրկված 5 գյուղերի 80 գյուղացիական տնտեսություններ: Բեռը անհատույց տրամադրվելու է նրանց ցանքի և կազմակերպության կողմից տրամադրվող դասընթացներից ստացված գիտելիքների կիրառման արդյունքում բարձր բերքատվություն/եկամուտ ստանալու և եկամուտը սեփական տնտեսության հետագա զարգացման համար օգտագործելու նպատակով: | Հայկական աջակցության ծրագիր | Սերմեր | SC 237-15 | [illegible] | [illegible] | 46.271 | 239.00 |
| Բժիշկ տեր Պետրոսյան Կամո - HKCC | Հովարդ Կարագյոզյան բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն, գտնվելու վայրը և իրավաբանականհասցեն ք. Երևան 0047, Նորքի Այգիներ 180, ՀՎՀՀ-01533153: | «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմարերպության կողմից 2012թ. ընթացքում իրականացվող «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագրի (Որոշում N Մ-030-Ա, 20 հունվարի, 2012թ.) իրականացման շրջանակներում ապահովել Հայաստանի և ԼՂՀ տարբեր մարզերի մինչև 14 տարեկան երեխաների անվճար ատամնաբուժական և ակնաբուժական օգնությունը: Բեռները բաշխվում են «Հովարդ Կարագյոզյան» 6 կլինիկաների ( Երևանի «Նորք» և «Մեբաստիա» կլինիկաներ, Գյումրիի, Գորիսի, Վանաձորի և Ստեփանակերտի կլինիկաներ) միջև երեխաների բուժումը ապահովելու համար: | Շահառուներն են՝ ՀՀ մայրաքաղաք Երևանում, Շիրակի մարզի Գյումրի, Սյունիքի մարզի Գորիս, Լոռու մարզի Վանաձոր և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքներում բնակվող մինչև 14 տարեկան բոլոր երեխաները, ովքեր կամավոր դիմում են մեր կլինիկաները ատամնաբուժական և ակնաբուժական անվճար օգնություն ստանալու նպատակով: Սպասարկվում են նաև նույն մարզերի սահմաններում տվյալ քաղաքների տարածքից դուրս բնակվող հաշմանդամ, ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների մինչև 14 տարեկան երեխաները: | Հովարդ Քարաքոսյան կորպորացիա | Ատամնաբուժական պարագաներ | SC 237-18 | | 1 | 120.21 | 5,243.82 |
| | | | | | Բշժկական պարագաներ | SC 237-30 | 1 | | 3.6291 | 122.01 |
| | | | | | Ատամնաբուժական մասեր | SC 237-35 | 1 | | 1.8145 | 953.93 |
| | | | | | Ատամնաբուժական մասեր | SC 237-36 | 1 | | 1.8145 | 2,444.95 |
| | | | | | Ատամբաբուժական սարքեր | SC 237-37 | 1 | | 3.6291 | 5,002.53 |
| | | | | | Բժշկական ամսագրեր | SC 237-38 | 2 | | 12.702 | 25.00 |

| ՍՏԱՑՈՂ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ԴՈՆՈՐ | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ԿՈԴ | ԱՐԿՂ | ՊԱԼԵՏՍ /SKIDS | ՔԱՇ կգ | ԱՐԺԵՔ $ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Վանոյան Մայիս, AAEF հայկական մասնաճյուղ | Անուշավան Աբրահամյան Կրթական Հիմնադրամ (ԱԱԿՀ) Հայաստանի մասնաճյուղ Գտնվելու վայրը: Երևան, Մայաթ Նովա 18, բն. 59, Իրավաբանականհասցեն: Երևան, Ամիրյան 8, բն.26, ՀՎՀՀ 01238936 | Բեռները հատկացված են Արմավիրի Պետական Ինդուստրիալ ՄանկավարժականՔոլեջի (Տնօրեն Արմեն Խաչատրյան, Հեռ: 094 934313, Անկախ հանձնաժողովի նախագահ Աթանես Սարկավագ ՄարգարյանՀեռ 093 401402) Անուշավան Աբրահամյան Կրթական Հիմնադրամի (ԱԱԿՀ) կողմից բարեգործական ծրագրերի շրջանակներում իրականացվող վերանորոգված զուգարանների համալրման նպատակով: Բեռները ներառում են ԱԱԿՀ-ի կողմից վերանորոգված և տարբեր հարկերում գտնվող 7 զուգարանների բաժանարարները, զուգարանների բոլոր անհրաժեշտ ակցեսուարները (պիտույքները) հայելիներ, անձեռոցիկների պիտույքներ, զուգարանների համար նախատեսվող այլ պիտույքներ: Դրանք օգտագործվելու են վերոնշյալ քոլեջի աշակերտների և ուսուցիչների համար: | Բեռի ստացման իրական շահառուն Արմավիրի Պետական Ինդուստրիալ ՄանկավարժականՔոլեջն է: Բեռի տրամադրման նպատակն է ապահովել ԱԱԿՀ-ի հովանավորությամբ վերանորոգված զուգարանների համալրումը և բարելավել քոլեջի կենցաղային պայմանները աշակերտների և ուսուցիչների համար: | Անուշավան Աբրահամյան կրթական հիմնադրամ | Շինարարական գործիքներ | SC 237-14 | 2 | 4 | 1654.4 | 9,139.88 |
| | | | | | Ընդհանուր | | 173 | 26 | 8,908 | 770,651.89 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**13 ապրիլի 2012 թվականի N Մ-258-Ա**
**քաղ. Երևան**

## «ՍԱՐԴԱՐԱՊԱՏ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 14-ի N 3/3.8-2/4811-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի ապրիլի 12-ի N ՖԲ/ԱեՄ-5/2593-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 11-ի N ԱԱ/3-6/3099-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Նյու Ջերսիի սբ. Վարդանանց առաքելական եկեղեցու կողմից ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով, որպես օժանդակություն, «Սարդարապատ» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բեռի (154 տեղ, 6452 կգ ընդհանուր քաշով, 70325 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 6205 ԱՄՆ-ի դոլար, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. «Սարդարապատ» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ու բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**Բեռի բաշխման ցանկ**
**Հայաստանի Հանրապետություն**

| Անվանումը | Քանակը | Արժեքը | Մարզ | Համայնքի անվանումը | Շահառուներ |
|---|---|---|---|---|---|
| Մանկական հագուստ | 22 արկղ | 8250 ԱՄՆ-ի դոլար | Երևան | Շենգավիթ | Սոցիալապես անապահով 50 ընտանիք |

**Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն**

| Անվանումը | Քանակը | Արժեքը | Վարչական շրջանը | Համայնքի անվանումը | Շահառուները | Քանակը ըստ գյուղերի |
|---|---|---|---|---|---|---|
| Մանկական հագուստ | 80 արկղ | 39745 ԱՄՆ-ի դոլար | Շահումյան | Ակնաբերդ | Սոցիալապես անապահով 20 ընտանիք | 15 արկղ |
| | | | Շահումյան | Նոր Գետաշեն | Սոցիալապես անապահով 20 ընտանիք | 15 արկղ |
| | | | Շահումյան | Եղեգնուտ | Սոցիալապես անապահով 20 ընտանիք | 15 արկղ |
| | | | Շահումյան | Քարվաճառ | Սոցիալապես անապահով 20 ընտանիք | 15 արկղ |
| | | | Շուշի | Շուշի | Սոցիալապես անապահով 30 ընտանիք | 20 արկղ |
| Մանկական կոշիկ (նոր) | 51 արկղ 816 զույգ | 21880 ԱՄՆ-ի դոլար | Շահումյան | Նոր Գետաշեն | Սոցիալապես անապահով 20 ընտանիք | 10 արկղ 160 զույգ |
| | | | Շահումյան | Ակնաբերդ | Սոցիալապես անապահով 20 ընտանիք | 10 արկղ 160 զույգ |
| | | | Շահումյան | Քարվաճառ | Սոցիալապես անապահով 20 ընտանիք | 10 արկղ 160 զույգ |
| | | | Շուշի | Շուշի | Սոցիալապես անապահով 40 ընտանիք | 21 արկղ 336 զույգ |
| Փափուկ խաղալիքներ (նոր) | 1 արկղ 30 հատ | 450 ԱՄՆ-ի դոլար | Շուշի | Շուշի | Սոցիալապես անապահով 15 ընտանիք | 30 հատ |

«Սարդարապատ» բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ Վ. Պողոսյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**13 ապրիլի 2012 թվականի N Մ-259-Ա**
**քաղ. Երևան**

### «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 16-ի N 3/3.8-2/4884-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի ապրիլի 12-ի N ՖԲ/ԱնՄ-5/2592-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 11-ի N ԱԱ/3-6/3098-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 20-ի NN Մ-004-Ա, Մ-005-Ա, Մ-006-Ա, Մ-007-Ա, Մ-008-Ա, Մ-009-Ա, Մ-010-Ա, Մ-011-Ա, Մ-012-Ա, Մ-013-Ա և Մ-014-Ա որոշումներով հաստատված ծրագրերի 10-րդ կետերում «մարզական պարագաներ» բառերը փոխարինել «մարզական պարագաներ և խաղալիքներ» բառերով:

2. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված՝ ստորև նշված բեռները ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված որոշումներով հաստատված ծրագրերի շրջանակներում՝

1) փափուկ խաղալիքներ՝ 4 տեղ, 685 կգ ընդհանուր քաշով, 6000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 7000 ԱՄՆ-ի դոլար (բաշխման ցանկը կցվում է), [illegible]

2) կոշիկներ՝ [illegible] կգ ընդհանուր քաշով, 12000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, [illegible] ծախսերը կազմել են 7000 ԱՄՆ-ի դոլար (բաշխման ցանկը կցվում է), [illegible]

3. Սույն [illegible] Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, [illegible] աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, [illegible] կառավարությանն առընթեր պետական եկամուտների [illegible]ին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գ[illegible], [illegible], Շի[illegible], [illegible]նիքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

---

"Վորլդ Վիժն" ՄԲԿ կողմից C 1568 առ 05.03.2012 հայտարարագրով
ԱՄՆ-ից ստացված
ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ (չորս պալետ)
Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 13000.00 ԱՄՆ դոլար, որից տրանսպորտային ծախսերը կազմում են 7000.00 ԱՄՆ դոլար, քաշը՝ 685 կգ, տեղերի քանակը՝ 4:

| Քանակ | Չափման միավոր | Նկարագրություն | Քաշը (կգ.բր.) | Գինը (ԱՄՆ դոլար) | Բաշխման վայրը, ՀՀ Կառավարության ԲԾՀՀ որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 220 | հատ | փափուկ խաղալիք | | 1117.60 | Մ-011-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Գյումրի քաղաքի և Հովնի ու Մարմաշեն գյուղերի կարիքավոր բնակչությանը |
| 220 | հատ | փափուկ խաղալիք | | 1117.60 | Մ-014-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում |
| 210 | հատ | փափուկ խաղալիք | | 1066.80 | Մ-008-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջաններում |
| 200 | հատ | փափուկ խաղալիք | | 1016.00 | Մ-009-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Ալավերդու տարածաշրջանում |
| 220 | հատ | փափուկ խաղալիք | | 1117.60 | Մ-012-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Կապանի տարածաշրջանում |
| 220 | հատ | փափուկ խաղալիք | | 1117.60 | Մ-013-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Սիսիանի և Գորիսի տարածաշրջաններում |
| 220 | հատ | փափուկ խաղալիք | | 1117.60 | Մ-006-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի |

ԽՌ. 5/5.5

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանում |
| 210 | հատ | փափուկ խաղալիք | | 1066.80 | Մ-007-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Գավառի տարածաշրջանում |
| 220 | հատ | փափուկ խաղալիք | | 1117.60 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Ստեփանավանի տարածաշրջանում |
| 200 | հատ | փափուկ խաղալիք | | 1016.00 | Մ-005-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանում |
| 418 | հատ | փափուկ խաղալիք | | 2128.80 | Մ-004-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | | 13000.00 | |

"Վորլդ Վիժն" ՄԲԿ կողմից C 8606 առ 27.03.2012 հայտարարագրով
ԱՄՆ-ից ստացված
ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ (մեկ կոնտեյներ)

Կոնտեյների համարն է TTNU 522040-7 : Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 19000.00 ԱՄՆ դոլար, որից տրանսպորտային ծախսերը կազմում են 7000.00 ԱՄՆ դոլար, քաշը` 11713 կգ, տեղերի քանակը` 1129:

ԽՌ. 5/5.5

| Քանակ | Չափման միավոր | Նկարագրություն | Քաշը (կգ.բր.) | Գինը (ԱՄՆ դոլար) | Բաշխման վայրը, ՀՀ Կառավարության ԲԾՀՀ որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 4200 | զույգ | ռետինե կոշիկ կտորե երեսամասով | | 2352.00 | Մ-011-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Գյումրի քաղաքի և Հովունի ու Մարմաշեն գյուղերի կարիքավոր բնակչությանը |
| 4200 | զույգ | ռետինե կոշիկ կտորե երեսամասով | | 2352.00 | Մ-014-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում |
| 3000 | զույգ | ռետինե կոշիկ կտորե երեսամասով | | 1680.00 | Մ-008-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջաններում |
| 2100 | զույգ | ռետինե կոշիկ կտորե երեսամասով | | 1176.00 | Մ-009-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Ալավերդու տարածաշրջանում |
| 3000 | զույգ | ռետինե կոշիկ կտորե երեսամասով | | 1680.00 | Մ-012-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Կապանի տարածաշրջանում |
| 3000 | զույգ | ռետինե կոշիկ կտորե երեսամասով | | 1680.00 | Մ-013-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Սիսիանի և Գորիսի տարածաշրջաններում |
| 3000 | զույգ | ռետինե կոշիկ կտորե երեսամասով | | 1680.00 | Մ-006-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանում |
| 3000 | զույգ | ռետինե կոշիկ կտորե երեսամասով | | **1680.00** | Մ-007-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Գավառի տարածաշրջանում |
| 3000 | զույգ | ռետինե կոշիկ կտորե երեսամասով | | **1680.00** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Ստեփանավանի տարածաշրջանում |
| 2100 | զույգ | ռետինե կոշիկ կտորե երեսամասով | | **1176.00** | Մ-005-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանում |
| 3270 | զույգ | ռետինե կոշիկ կտորե երեսամասով | | **1864.00** | Մ-004-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Երեվանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 11713 | 19000.00 | |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 ապրիլի 2012 թվականի N Մ-260-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի N Մ-299-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 10-ի N 3/3.8-1/4506-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 10-ի N ԱԱ/3-4/3041-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 13-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծման և անհատույց բաշխման» ծրագրի մասին» N Մ-299-Ա որոշմամբ հաստատված ծրագրում (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-094-Ա և 2012 թվականի մարտի 23-ի N Մ-191-Ա որոշումների խմբագրությամբ) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) ծրագրի 8-րդ կետում «մինչև 2011 թվականի դեկտեմբերի 30-ը» բառերը փոխարինել «մինչև 2012 թվականի ապրիլի 30-ը» բառերով.

2) ծրագրի 11-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Նախատեսվող կազմակերպչական ծախսերը կկազմեն 500000 դրամ՝ հիմնադրամի ֆինանսական գործունեության աուդիտի իրականացման համար»:

2. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01565354) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00433357) 2012 թվականի փետրվարի 27-ին կնքված՝ N 10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հիմնադրամի 2011 թվականի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտ ուսումնասիրության աշխատանքների իրականացում՝ 500000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**13 ապրիլի 2012 թվականի N Մ - 261 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՆՈՒՆ ԲԱՐՈՒԹՅԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի 29-ի N 3/3.8-1/3928-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի մարտի 22-ի N 03/1691 -12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի մարտի 19-ի N ՖԲ/ԱնՄ-5/1814/-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 4-ի N BBD7-647E-6698 և Երևանի քաղաքապետի 2012 թվականի մարտի 26-ի N 02/34-13185h եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հանուն բարության» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 175795200 դրամ ընդհանուր արժողությամբ «Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին» ծրագիրը (կցվում է):

2. «Հանուն բարության» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատում եմ

«Հանուն Բարության» Բարեգործական
հիմնադրամի տնօրեն Ա. Աբրահամյան
« 10 » ապրիլի 2012թ.

Աջակցություն Սոցիալապես անապահով ընտանիքներին

Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների, սոցիալապես անապահով բազմազավակ և հաշմանդամ, միայնակ թոշակառու, կարիքավոր ընտանիքների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների 2012թ. ապրիլ-2014թ. ապրիլ օժանդակության ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Կազմակերպել զոհված ազատամարտիկների, սոցիալապես անապահով բազմազավակ և հաշմանդամ, միայնակ թոշակառու, կարիքավոր թվով 640 ընտանիքների նյութական աջակցություն, որը կնպաստի աղքատության նվազեցմանը: Նյութական աջակցություն, բացի ծրագրում ընդգրկված շահառուներից, նախատեսել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում հաշվառման վերցված միայնակ հաշմանդամ տարեցներին և Երևանի քաղաքապետարանի միջոցով սոցիալապես անապահով խավերին: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները ըստ ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N 66 –Ն որոշմամբ հաստատված « Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի | 3-րդ կետի բ) ենթակետի համաձայն օգտվել հարկային և մաքսային արտոնություններից: |
| 3 | Բարեգործը (բարեգործները) | «Հանուն Բարության» Բարեգործական հիմնադրամ |
| 4 | Ծրագիրն իրականացնողները | «Հանուն Բարության» Բարեգործական հիմնադրամ (ՀՀ ք. Երևան, Աբովյան 4/3 - իրավաբանական, Ֆրիկի 4շենք, բն. 2 - գործունեության, ՀՎՀՀ - 02570568 ) |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը (վայրերը), բնագավառը | ք. Երևան<br><br>Սոցիալական բնագավառ |

| | | |
|---|---|---|
| 6 | Ծրագրի բյուջեն (ստացվելիք գումարներն ըստ ֆինանսավորման աղբյուրների, դրանց ստացման նախատեսվող ժամկետները, կատարման ենթակա ծախսերի նախատեսվող ուղղությունները, չափերը և ժամկետները) | Ծրագրի բյուջեն 01.04.2012թ. – 30.04.2014թ. նախատեսվում է 175.795.200 դրամ, որը բացի շահառուներին տրվող դրամական օգնությունից (46.080000 դրամ) և նյութական աջակցության համար նախատեսված գումարից (115.200000 դրամ) ներառում է նաև կազմակերպչական 9 % ծախսեր (14.515.200դրամ): Ընդհանուր ծախսերը մեկ տարվա կտրվածքով կազմում են շուրջ 87.897.600դրամ:<br>Ծրագրի ֆինանսավորումը իրականացնում է «Հանուն Բարության» Բարեգործական հիմնադրամը: |
| 7 | Բարեգործություն ստացող | Շահառուները կազմակերպությունում հաշվառման են վերցվում ՀՀ պաշտպանության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների և Երևանի քաղաքապետարանի կողմից տրված փաստաթղթերի հիման վրա՝ նպատակ ունենալով մեղմելու Երևանում բնակվող զոհված ազատամարտիկների, սոցիալապես անապահով բազմազավակ և հաշմանդամ միայնակ թոշակառուների ընտանիքների սոցիալական վիճակը:<br>Նախատեսել շահառուների ամենամսյա դրամական և ապրանքային օգնություն,մինչև ծրագրի ավարտը՝ նպատակ ունենալով բարելավել թվով 640 ընտանիքների սոցիալական պայմանները: |

<table>
<tr><td>8</td><td>Ծրագրի իրականացման տևողությունը և/կամ սկիզբը, ավարտը</td><td>01.04.12 –.30.04. 2014թ.</td></tr>
<tr><td>9</td><td>Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</td><td>2012թ. ապրիլից զոհված ազատամարտիկների սոցիալապես անապահով բազմազավակ և հաշմանդամ միայնակ թոշակառուների ընտանիքների օժանդակության ծրագրի իրականացման համար նախատեսվող 161.280.000 դրամից՝ 6 ամիս ժամկետով 640 ընտանիքներ կստանան 46.080.000 դրամ էլ. էներգիայի կամ գազի ծախսերի վճարման համար՝ յուրաքանչյուրին 12000 դրամ և նյութական աջակցություն 10000 դրամի չափով:<br>18 ամիս ժամկետով 640 ընտանիքներ կստանան յուրաքանչյուրը ամսական 10000 դրամի չափով նյութական օգնություն 115200000 դրամ արժեքով:</td></tr>
<tr><td>10</td><td>Ձեռք բերվելիք ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը (եթե հայտնի են, ապա պետք է նշել նաև գործարքների կողմերը, միջնորդ իրավաբանական կամ/և ֆիզիկական անձիք, այդ թվում նաև բարեգործական բեռի ներմուծման հետ կապված)</td><td>Ծրագրում ընդգրկված շահառուներին 6 ամիս ժակետով կհատկացվի 12000 դրամ՝ էլ. էներգիայի կամ գազի վճարման համար, ինչպես նաև 18 ամիս ժամկետով 10000 դրամ արժողությամբ նյութական օգնություն:<br>Ամսեկան մեկ ընտանիքի հաշվով նյութական օգնության հաշվարկ
<table>
<tr><th>Ապրանքի անվանումը</th><th>Չափի միավորը</th><th>Քանակը</th><th>Միավորի արժեքը (դրամ)</th></tr>
<tr><td>Բուսական յուղ</td><td>լիտր</td><td>1</td><td>900</td></tr>
<tr><td>Բրինձ</td><td>կգ</td><td>1</td><td>430</td></tr>
<tr><td>Ռսպ</td><td>կգ</td><td>1</td><td>600</td></tr>
</table>
</td></tr>
</table>

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հնդկաձավար | կգ | 1 | 800 |
| | | Ոլոռ | տուփ | 1 | 700 |
| | | Շաքարավազ | կգ | 2 | 980 |
| | | Վերմիշել | կգ | 1 | 350 |
| | | Ալյուր | կգ | 1 | 230 |
| | | **Ընդամենը** | | | 4990 |

18 ամսվա համար ձեռքբերվող ապրանքների արժեքը կազմում է 57484800 դրամ:

Փաթեթավորում՝ 115200 դրամ:

Դրամական օգնություն մեկ ընտանիքի հաշվով ամսական 5000 դրամ՝ 18ամսվա համար կազմում է 57600000 դրամ:

| | | |
|---|---|---|
| 11 | Անմիջական շահառուների սպառմանը չուղղվող ծախսերը (կազմակերպչական ծախսեր), դրանց կատարման կարգը, այդ ծախսերի չափաքաժիններն ըստ ծրագրի փուլերի, եթե այդպիսիք առանձնացված են | Կազմակերպական ծախսերը կապված գրասենյակի գործունեության հետ կկազմեն ընդհանուր բյուջեի 9 % կամ շուրջ 14.515.200 դրամ, յուրաքանչյուր տարվա կտրվածքով 7.257.600 դրամ, որից՝<br>Աշխատավարձ՝ 3802500 դրամ<br>Սոց. Վճար՝705375 դրամ<br>Մեքենակազմի շահագործում՝ 2749725 դրամ: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ (եթե համագործակցություն նախատեսվում է), համագործակցության բովանդակությունը, իրականացման կարգը | Ծրագրի արդյունավետ իրականացման համար նախատեսում ենք համագործակցություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Երևանի քաղաքպետարանի հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը (եթե վերահսկողություն նախատեսվում է) | Ծրագրի կատարման վերահսկողությունը կիրականացվի «Հանուն Բարության» Բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից: Կազմակերպության գործունեության վերաբերյալ սահմանված կարգով եռամսյա տեղեկատվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**16 ապրիլի 2012 թվականի N Մ- 262 -Ա**
**(Որոշումն ընդունվել է 2012 թվականի ապրիլի 13-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 16-ի N 3/3.8-2/4886-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 12 -ի N ԱԱ/3-6/ 3147-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստանի Հանրապետության սեյսմիկ ռիսկի գնահատման և կառավարման պլանավորման ծրագրի» շրջանակներում Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության կողմից Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության հասցեով ստացված վեց ժամանակակից ուժեղ շարժումների ինժեներային սեյսմոգրաֆների իրենց լրակազմով (8 տեղ, 95 կգ ընդհանուր քաշով, 12360000 ճապոնական յեն արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծման ծրագիրը:
2. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**13 ապրիլի 2012 թվականի N Մ- 263 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-197-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 10-ի N 3/3.8-1/4504-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 10-ի N ԱԱ/3-4/3042-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի մարտի 23-ի «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցում» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-197-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Եվրոստան-Ոլյուտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01537756) 2012 թվականի ապրիլի 2-ին կնքված N 23 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դռների և վիտրաժների պատրաստում և տեղադրում՝ 3168423 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 ապրիլի 2012 թվականի N Մ- 264 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-197-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ) (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 12-ի N 3/3.8-1/4651-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 12-ի N ԱԱ/3-4/3164-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի մարտի 23-ի «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցում» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-197-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հատուկէլեկտրամոնտաժ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00407927) 2012 թվականի ապրիլի 2-ին կնքված N 24 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի գլխավոր մասնաշենքի համար մալուխագծերի նախագծման և տեղափոխման աշխատանքների իրականացում՝ 1033450 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**16 ապրիլի 2012 թվականի N Մ- 265 -Ա**
**(Որոշումն ընդունվել է 2012 թվականի ապրիլի 13-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## «ՇՈՂԻԿ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀՈԳ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի 22-ի N 3/8-2/3964-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի մարտի 26-ի N02/1833-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի մարտի 22-ի N ՖԲ/ԱնՄ-5/1949-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի 22-ի N ԱԱ/3-6/2423-12, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2012 թվականի ապրիլի 2-ի N 01/17/934-12, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2012 թվականի մարտի 22-ի N 1/3/1-1/1270-12, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2012 թվականի մարտի 21-ի N 01/06/869-12, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի մարտի 22-ի N 01/1157 -12 և Երևանի քաղաքապետի մարտի 27-ի N 02/34-13898h-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Շողիկ» հայկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ 700000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով «Հոգ Հայաստանին» ծրագիրը (կցվում է):

2. Առաջարկել Շողիկ» հայկական բարեգործական հասարակական կազմակերպու-թյանը՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետու-թյան Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Շիրակի մարզպետներին ու Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Շողիկ» ՀԿՀ կազմակերպության
տնօրեն
Գ Մինասյան
«16» ապրիլ 2012թ.

# ՀՈԳ ՀԱՅԱՍՏԱՆԻ

*ծրագիր*

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Աջակցություն ցուցաբերել կազմակերպությունում գրանցված սոցիալապես անապահով ընտանիքներին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին, բազմազավակ ընտանիքներին: Կազմակերպել ամառային ճամբար 7-16 տարեկան երեխաների համար, Արագածոտնի մարզ գ. Կարբի:<br>Ապրանքի տեսքով ստացված օգնությունը՝ հագուստ, կոշկեղեն, կենցաղային իրեր, սնունդ, խաղալիքներ, հիգենիկ պարագաներ տրամադրել, բացի ծրագրում ընդգրկված շահառուներից նաև ՀՀ Սոցիալական ապահովության նախարարությունում հաշվառման վերցված սոցիալապես անապահով ընտանիքներին, տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով սոցիալապես անապահով խավերին, գիշերօթիկ և մանկական կրթական հաստատություններին: |
| 2. | Ծրագրի՝ բարեգործական որակման նպատակները ըստ ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի № 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի | 3-րդ կետի բ) ենթակետի համաձայն օգտվել հարկային և մաքսային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Անգլիայի «Հայկական ծառայություններ» բարեգործական հիմնադրամ |
| 4. | Ծրագիրն իրականացնողները | «Շողիկ» հայկական բարեգործական հասարակական կազմակերպություն<br>ք. Երևան, Նոր Արեշ, 26 փողոց 59/1, ՀՎՀՀ՝ 00438145 |



| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի իրականացման վայրը (վայրերը), բնագավառը | Ծրագիրը առնչվում է սոցիալական ոլորտին և ընդգրկում է Երևան քաղաքը, Արարատի մարզը, Արմավիրի մարզը, Արագածոտնի մարզը, Շիրակի մարզը, ԼՂՀ-ը: |
| 6. | Ծրագրի բյուջեն (ստացվելիք գումարներն ըստ ֆինանսավորման աղբյուրների*, դրանց ստացման նախատեսվող ժամկետները, կատարման ենթակա ծախսերի նախատեսվող ուղղությունները, չափերը և ժամկետները) | Ծրագրի բյուջեն 2012թ. ապրիլի 1-ից – 2014թ. դեկտեմբերի 31-ը. համար 700.000 ԱՄՆ դոլար: |
| 7. | Ծրագրի շահառուները* կամ նրանց ընտրության սկզբունքները, չափանիշները (կարող են նշվել նաև այն միջնորդավորված շահառուները, որոնց կենսապահովման, գործունեության պայմանները կբարելավվեն ծրագրի անմիջական շահառուի գործունեության արդյունքում) | Ծրագրի շահառուներն են Երևան քաղաքի (մոտ 400), Արարատի մարզի (մոտ 150), Արմավիրի մարզի (մոտ 100), Արագածոտնի մարզի (մոտ 250), Շիրակի մարզի (մոտ 100) ԼՂՀ-ի (մոտ 150)սոցիալապես անապահով ընտանիքները, զոհված ազատամարտիկների ընտանիքները նաև ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը և/կամ սկիզբը, ավարտը | 2012թ. ապրիլի 1-ից – 2014թ. դեկտեմբերի 31-ը |
| 9. | Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի փուլերը<br>1-ին փուլ<br>-2012թ. հունիսի 15-ից<br>Երևան քաղաքի, Արարատի մարզ, Արմավիրի մարզ, Արագածոտնի մարզ, Շիրակի մարզ, ԼՂՀ սոցիալապես անապահով ընտանիքների, ազատամարտիկների ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում: |

| | | |
|---|---|---|
| | | -«Երբ գալիս է սեպտեմբերը» ՀՀ Աշխատանքի և սոցալական հարցերի նախարարության հետ համատեղ ծրագրի շրջանակներում գրենական պիտույքների հագուստի նվիրաբերում Երևան քաղաքի, Արարատի մարզի, Արմավիրի մարզի, Արագածոտնի մարզի , Շիրակի մարզի, ԼՂՀ-ի անապահով ընտանիքների և ազատամարտիկների ընտանիքների երեխաներին:<br>2-րդ փուլ<br>-2013թ. հունիսի 15-ից<br>Երևան քաղաքի, Արարատի մարզի, Արմավիրի մարզի, Արագածոտնի մարզի , Շիրակի մարզի, ԼՂՀ-ի սոցիալապես անապահով ընտանիքների, ազատամարտիկների ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում:<br>-«Երբ գալիս է սեպտեմբերը» ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ ծրագրի շրջանակներում գրենական պիտույքների հագուստի նվիրաբերում Երևան քաղաքի, Արարատի մարզի, Արմավիրի մարզի, Արագածոտնի մարզի , Շիրակի մարզի, ԼՂՀ-ի անապահով ընտանիքների և ազատամարտիկների ընտանիքների երեխաներին:<br>3-րդ փուլ<br>-2014թ. հունիսի 15-ից<br>Երևան քաղաքի, Արարատի մարզի, Արմավիրի մարզի, Արագածոտնի մարզի , Շիրակի մարզի, ԼՂՀ-ի սոցիալապես անապահով ընտանիքների ազատամարտիկների ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում:<br>-«Երբ գալիս է սեպտեմբերը» ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ ծրագրի շրջանակներում գրենական պիտույքների հագուստի նվիրաբերում Երևան քաղաքի, Արարատի մարզի, Արմավիրի մարզի, Արագածոտնի մարզի , Շիրակի մարզի, ԼՂՀ-ի սոցիալապես անապահով ընտանիքների ազատամարտիկների ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում: |
| 10. | Ձեռք բերվելիք ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը (եթե հայտնի են, ապա պետք է նշել նաև գործարքների կողմերը, միջնորդ իրավաբանական կամ և ֆիզիկական անձիք, այդ թվում նաև բարեգործական բեռի ներմուծման հետ կապված)* | Նախատեսված է բարերարի կողմից բեռի ներմուծում և անհատույց բաշխում՝<br>2012թ. 1-ին տարին 200.000 ԱՄՆ դոլար<br>2013թ. 2-րդ տարին 200.000 ԱՄՆ դոլար<br>2014թ. 3-րդ տարին 300.000 ԱՄՆ դոլար:<br>Ներմուծում<br>-հագուստ, կոշիկ, սպիտակեղեն, խաղալիք – 390.000 ԱՄՆ-ի դոլար - բաշխման համար<br>-սնունդ – 60.000 ԱՄՆ- դոլար - ճամբարի կազմակերպման և բաշխման համար<br>-հիգենիկ պարագաներ – 20.000 ԱՄՆ-ի դոլար - ճամբարի կազմակերպման և բաշխման համար |



| | | |
|---|---|---|
| | | -համակարգիչներ (20 հատ, նոր) – 8.000 ԱՄՆ-ի դոլար<br>գույք (սեղան, աթոռ, պահարան, մահճակալ, հեծանիվ, սայլակ) – 72.000 ԱՄՆ-ի դոլար ճամբարի կազմակերպման համար<br>-գրենական պիտույքներ, դպրոցական պայուսակ – 130.000 ԱՄՆ-ի դոլար – «Երբ գալիս է սեպտեմբերը» և ճամբարի փուլերը իրականացնելու համար<br>-Ամառային ճամբար կազմակերպելու համար նախատեսված ծախսեր – 20.000 ԱՄՆ-դոլար (երեխաների տեղափոխում, կոմունալ և ընթացիկ ծախսեր), որից տեղական շուկայից ձեռք բերվող ապրանքներ (հաց, կաթնամթերք, մսամթերք և այլն) 10.000 ԱՄՆ դոլար: |
| 11. | Անմիջականորեն շահառուների սպառմանը չուղղվող ծախսերը (կազմակերպչական ծախսեր), դրանց կատարման կարգը, այդ ծախսերի չափաբաժինները ըստ ծրագրի փուլերի, եթե այդպիսիք առանձնացված են | Ծրագրի համար լրացուցիչ կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում, ծրագիրն իրականացվելու է հիմնադրամի ընդհանուր կազմակերպչական ծախսերի սահմաններում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ (եթե համագործակցություն նախատեսվում է), համագործակցության բովանդակությունը, իրականացման կարգը* | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է ՀՀ Աշխատանքի և սոցալական հարցերի նախարարության, ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողվի և տեղական ինքնակառավարման մարմինների հետ: |
| 13. | Ծրագիր արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը (եթե վերահսկողություն նախատեսվում է) | Ծրագրի իրականացման արդյունավետության նկատմամբ վերահսկողություն կիրականացվի Անգլիայի «Հայկական ծառայություններ» բարեգործական հիմնադրամի կողմից:<br>Կազմակերպության գործնեության վերաբերյալ սահմանված կարգով տեղեկատվություն ներկայացնել ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին պետեկամուտների կոմիտեին: |

«Շողիկ» հայկական բարեգործական հասարակական կազմակերպություն ՀՀ, քաղ. Երևան, [illegible] 26 [illegible] 59/1, ՀՎՀՀ՝ 00438145

«Շողիկ» հայկական բարեգործական հասարակական կազմակերպության տնօրեն՝ Գևորգ Սինանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**13 ապրիլի 2012 թվականի N Մ-266-Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԿՐՏԱԿԱՆԻՆ ԿԻՑ ՄԵԿ ՀԱՐԿԱՆԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 6-ի N 3/3.8-1/4406-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի ապրիլի 10-ի N 02/2167-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 6-ի N ԱԱ/3-4/2977-12 եզրակացությունները,*

***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 96.293.770 դրամ արժողությամբ «Մկրտականին կից մեկ հարկանի շինությունների վերակառուցման առաջին փուլ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սպիտակ Կամար» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Երևան, Վ.Համբարձումյան 10 շենք, բն.22, ՀՎՀՀ՝ 00250089) 2012 թվականի մարտի 24-ին կնքված N 02Շ/012 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է իր ուժերով, միջոցներով ու նյութերով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մկրտականին կից մեկ հարկանի շինությունների վերակառուցման առաջին փուլի աշխատանքների իրականացում՝ 96.293.770 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Վաղարշապատի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ
ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«02» ապրիլի 2012թ.

Մկրտարանին կից մեկ հարկանի շինությունների վերակառուցման առաջին փուլի աշխատանքների

# ԾՐԱԳԻՐ

5/4

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մկրտարանին կից մեկ հարկանի շինությունների վերակառուցման առաջին փուլի աշխատանքներ: Նախատեսվող շինություններում կազմակերպվելու են նկարչության, խեցեգործության, համակարգչի և օտար լեզուների ուսուցման դասընթացներ: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին |
| 6. | Ծրագրի բյուջեն | 96 293 770 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Տարածաշրջանի 6-18 տարեկան երեխաները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 15 ապրիլի, 2012թ. - 30 հոկտեմբերի, 2012թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մկրտարանին կից մեկ հարկանի շինությունների վերակառուցման առաջին փուլի աշխատանքներ 96 293 770 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Շինարարական աշխատանքներն իրականացվում են «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ի (ՀՀ. ք. Երևան, Վ. Համբարձումյան 10 շենք, 22 բն. ՀՎՀՀ 00250089) կողմից, պայմանագիր թիվ 02Շ/012՝ կնքված 24.03.2012թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Վերակառուցվող շինությունների մակերեսը կազմում է 310.2 քմ., քանդման ենթակա շինությունների ծավալները հետևյալն են՝ 285.0 քմ., մակերեսով երկաթ բետոնե ծածկ և 54.0 սմ հաստությամբ 295.0 քմ մակերեսով երկտակ տուֆե շար, այդ թվում կամարներ և սյունաշարեր: Նախատեսվող շինությունների դեպի Մայր Տաճար նայող պատը պետք է մնա անփոփոխ, նոր հատվածը ունենալու է առանձին երկաթ-բետոնե կարկաս: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Արմավիրի մարզպետարանի և Էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակ հանձնաժողովին կներկայացվեն ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**13 ապրիլի 2012 թվականի N Մ- 267-Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 6-ի N 3/3.8-1/4404-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի ապրիլի 11-ի N 02/2176-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 6-ի N ԱԱ/3-4/2976-12 եզրակացությունները,*

***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 42.188.770 դրամ արժողությամբ «Ռուբեն Սևակի թանգարանի կազմակերպում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Աֆինա Պալլադա» ՓԲԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Երևան, Նալբանդյան 48/1, ՀՎՀՀ 02707713) 2012 թվականի մարտի 16-ին կնքված N 01Շ եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է իր ուժերով, միջոցներով ու նյութերով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայրավանքում Ռուբեն Սևակի թանգարանի կազմակերպման աշխատանքների իրականացում՝ 42.188.770 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Վաղարշապատի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ
ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«02» [illegible] 2012 թ.

Ռուբեն Սևակի թանգարանի կազմակերպման

**ԾՐԱԳԻՐ**

5/5

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Մայրավանքի նախկին միաբանական սեղանատան վայրում Ռուբեն Սևակի Թանգարանի կազմակերպումը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին |
| 6. | Ծրագրի բյուջեն | 42 188 770 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Մայր Աթոռի միաբանությունը և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 15 ապրիլի, 2012թ. - 30 սեպտեմբեր, 2012թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մայրավանքում Ռուբեն Սևակի Թանգարանի կազմակերպում 42 188 770 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:<br>Շինարարական աշխատանքներն իրականացվում են «Աֆինա Պալլադա» ՍՊԸ-ի (ՀՀ. ք. Երևան, Նալբանդյան 48/1 ՀՎՀՀ 02707713) կողմից, պայմանագիր թիվ 01Շ՝ կնքված 16.03.12թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է թանգարանային երեք սրահի կազմակերպում նախկին միաբանական սեղանատան տարածքում՝ անհրաժեշտ վերակառուցման և շինարարական աշխատանքներ կատարելով: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Արմավիրի մարզպետարանի և Էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակ հանձնաժողովին կներկայացվեն ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 ապրիլի 2012 թվականի N Մ-268-Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՅՑՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 4-ի N 3/3.8-2/4245-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 4-ի N ԱԱ/3-6/2911-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել բարերար՝ Տիար Գագիկ Գալստյանի միջոցներով Չեխիայից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված բեռի՝ քիվեր (2 տեղ, 30 կգ ընդհանուր քաշով, 46.466 չեխական կրոնին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» Մ/Տ) ներմուծման ծրագիրը, որն անհատույց հանձնվելու է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հրեշտակապետաց եկեղեցուն:
2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**13 ապրիլի 2012 թվականի N Մ-269-Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի 28-ի N 3/3.8-2/3852-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի 29-ի N ԱԱ/3-6/2649-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված լուսային սարքավորումները (14 տեղ, 220 կգ ընդհանուր քաշով, 12.811 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ՝ փոխադրման ծախսերը կազմել են 580 եվրո, ՄԾՓ Տ/Մ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» ավագ դպրոց» ծրագրի մասին» N Մ-1063-Ա (2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1089-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 ապրիլի 2012 թվականի N Մ-270-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (N 1)

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի 28-ի N 3/3.8-2/3854-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի 29-ի N ԱԱ/3-6/2650-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված բեռը՝ ձայնի կառավարման վահանակ (մեկ տեղ, 25 կգ ընդհանուր քաշով, 6163 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ՝ փոխադրման ծախսերը կազմել են 63 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» Տ/Մ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» ավագ դպրոց» ծրագրի մասին» N Մ-1063-Ա (2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1089-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 ապրիլի 2012 թվականի N Մ- 271 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի N Մ-548-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2012 թվականի մարտի 27-ի N 98 գրությունը ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի 29-ի N 3/3.8-1/3906-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի 29-ի N 3/3-4/2671-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 31-ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Եղիշե Մանուկյան» (նոր անվանումը «Վաչե և Թամար Մանուկյաններ») մատենադարանի կառուցում ծրագրի մասին» N Մ-548-Ա որոշման (2010 թվականի մայիսի 14 N Մ-312-Ա և 2010 թվականի հուլիսի 2-ի N Մ-409-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի 8-րդ կետում «31 դեկտեմբերի 2011 թ.» բառերը փոխարինել «1 մայիսի 2012 թ.» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Վաղարշապատի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**13 ապրիլի 2012 թվականի N Մ - 272 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՐԵԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 4-ի N 3/3.8-2/4241-12, և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 3-ի N ԱԱ/3-6/2828-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ուկրաինայի հրեական կրոնական համայնքների միության կողմից Հայաստանի հրեական համայնքի հասցեով ստացված բեռի՝ «Մացա» (35 տեղ, 780 կգ ընդհանուր քաշով, 1659 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» Մ/Տ) ներմուծման ծրագիրը: Բեռը՝ հրեական ծիսական հաց, նախատեսված է հրեական տոնակատարության համար և տրամադրվելու է հրեական համայնքի կարիքավոր անդամներին:

2. Հայաստանի հրեական համայնքին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**13 ապրիլ 2012 թվականի N Մ-273-Ա**

**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-282-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Առողջապահական համակարգի հզորացում»)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի ապրիլի 4-ի N ՍՔ/15-1/2736-11 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 5-ի N 3/3.8-1/4359-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 6-ի N ԱԱ/3-4/2978-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-282-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ռենկո Արմէստեյտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02560091) 2012 թվականի մարտի 22-ին կնքված՝ N ԲԸԱՀ-ԾՁԲ-12/3 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խորհրդաժողովի կազմակերպման ծառայությունների մատուցում՝ 159200 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ապրիլի 2012 թվականի N Մ274Ա

## ԱՄՆ-Ի «ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՐՈՒՏ ԳՅՈՒՂԻ ԴՊՐՈՑԻ ԵՌԱՀԱՐԿ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՑԻՆԿԱՊԱՏՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 10-ի N 3/3.8-1/4509-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի ապրիլի 11-ի N 02/2179-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի ապրիլի 10-ի N 03/07-1/3498-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 10-ի N ԱԱ/3-4/3044-12 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2012 թվականի ապրիլի 10-ի N 102.1/104.3/1970-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի «Հայ կրթական հիմնարկություն» Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մեսրոպ Մաշտոցի 13, ՀՎՀՀ՝ 01542952)՝ իրականացվող՝ 5650000 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լորուտ գյուղի դպրոցի եռահարկ ուսումնական մասնաշենքի տանիքի վերանորոգում և ցինկապատում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով ԱՄՆ-ի «Հայ կրթական հիմնարկություն» Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Դիալոգ Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01533033) 2012 թվականի ապրիլի 2-ին կնքված՝ N 3 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի ապրիլի 20-ից մինչև հունիսի 25-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լորուտ դպրոցի եռահարկ ուսումնական մասնաշենքի տանիքի վերանորոգման և ցինկապատման աշխատանքների իրականացում՝ 5650000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:



3. ԱՄՆ-ի «Հայ կրթական հիմնարկություն» Հայաստանի մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԱՄՆ «Հայ կրթական հիմնարկության» ՀՀ մասնաճյուղ կազմակերպության
Գործադիր տնօրեն՝ Ստեփան Նալբանդյան
«04» ապրիլ 2012.թ.

# Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

## Հ Հ Լ Ո Ռ Ի Ի Մ Ա Ր Զ Ի՝ Լ Ո Ր Ո Ւ Տ Գ Յ Ո Ւ Ղ Ի Դ Պ Ր Ո Ց Ի Ե Ռ Ա Հ Ա Ր Կ Մ Ա Ս Ն Ա Շ Ե Ն Ք Ն Տ Ա Ն Ի Ք Ի Վ Ե Ր Ա Ն Ո Ր Ո Գ Ո Ւ Մ Ե Վ Ց Ի Ն Կ Ա Պ Ա Տ Ո Ւ Մ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ՀՀ Լոռիի մարզի Լորուտ գյուղի դպրոցի եռահարկ ուսումնական մասնաշենքի տանիքի վերանորոգման և ցինկապատման աշխատանքների իրականացում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ «Հայ Կրթական Հիմնարկություն »<br>600 West Broadway,Suite130, Glendale,CA 91204, (818)242-4154 |
| 4. | Ծրագիրը կատարողը | ԱՄՆ «Հայ Կրթական Հիմնարկություն » ՀՀ մասնաճյուղ<br>(ՀՀ,քաղ. Երևան, Մաշտոցի պող.13շենք,ՀՎՀՀ 01542952) հեռ 53-14-85, 091498071բջ |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Լոռիի մարզի Լորուտ գյուղի դպրոցը: Կրթության բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 5 650 000 ՀՀ.դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Լոռիի մարզի Լորուտ գյուղի համայնքը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2012թ ապրիլի 20-ից մինչև 2012թ հունիսի 30-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ՀՀ Լոռիի մարզի Լորուտ գյուղի դպրոցի եռահարկ ուսումնական մասնաշենքի տանիքի վերանորոգման և ցինկապատման աշխատանքներ՝ փայտյա կոնստրուկցիաների վերանորոգում և փոխարինում նորով, ջրհորդանների և ջրատարների կառուցում, նախկին ազբոշիֆերյա տանիքի քանդում և նոր ցինկապատում և այլն: |

2

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | ՀՀ Լոռիի մարզի Լորուտ գյուղի դպրոցի եռահարկ մասնաշենքի տանիքի վերանորոգման և ցինկապատման աշխատանքներն իրականացնելու է «Դիալոգ Գրուպ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ01533033) որի նախահաշվայի արժեքը կազմում է՝ 5.650.000 (հինգ միլիոն վեց հարյուր հիսուն հազար)ՀՀ դրամ: Առանց ԱԱՀ 20%-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Կրթության և գիտության նախարարության և ՀՀ Լոռիի մարզային կրթության վարչության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացնելու է ԱՄՆ-ի Հայ կրթական հիմնարկության բարերարների խորհուրդը և ՀՀ -ում մասնաճյուղի տնօրինությունը, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային և ամփոփ հաշվետվություններ): |

ԱՄՆ «Հայ կրթական հիմնարկության» ՀՀ մասնաճյուղ կազմակերպության
Գործադիր տնօրեն՝ Ստեփան Նալբանդյան

«04» ապրիլ 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**13 ապրիլի 2012 թվականի N Մ-275-Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N Մ-361-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի 20-ի N 3/3.8-2/3940-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի ապրիլի 2-ի N ՀՔ/22/2702-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի 28-ի N ԱԱ/3-6/2648-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Ֆրանսիայից ստացված բեռը (25 տեղ, 202 կգ ընդհանուր քաշով, 18719.71 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1141.22 եվրո, ցանկը կցվում է, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 14-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-361-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

5/11.15

**Ստացվող բեռի ցանկ**

**համաձայն N 99930, 98359 հաշիվ-ապրանքագրերի**

| Նո | Անվանում | Քանակ | Գին/Եվրո |
|---|---|---|---|
| 1 | (ուլտրաձայնային նեբուլայզեր), հակաբակտերիալ ֆիլտր | 45 | 602.55 |
| 2 | Արյան հավաքման QTF անոթների կոմպլեկտ (ՏԲ Գոլդ) 10 հիվանդի համար | 10 | 1061.10 |
| 3 | Միկրոպլանշետի ընթերցող, BIOTEK, ELX800 GEN5 | 1 | 4255.90 |
| 4 | Պուլսօքսիմետր, (Masimo RAD-5) + լրացուցիչ պարագաներ | 2 | 1634.74 |
| 5 | Պոմպ, ներծծող, էլեկտրական (Atmos), անզգայացման համար, 1լ | 1 | 1613.91 |
| 6 | (ներծծման պոմպ, էլեկտրական, atmoport N) հակաբակտերիալ ֆիլտր | 50 | 451.50 |
| 7 | Չափող սարք, ժապավեն, ուղղահայաց, 200սմ | 6 | 52.20 |
| 8 | Չափող սարք, մանկական, հորիզոնական/ուղղահայաց, 130սմ, փայտե | 5 | 1407.10 |
| 9 | Կշեռք (Seca 725), մեխանիկական, մանկական 0-15 կգ, աստիճանավորում՝ 10գ | 5 | 701.00 |
| 10 | Կշեռք, մեխանիկական, մեծահասակների համար՝ 0-150կգ, աստիճանավորում՝ 500գ | 5 | 262.80 |
| 11 | Կոնցենտրատոր O2 (DE Vilbiss 525ks+osd) 220Վ+լրացուցիչ պարագաներ | 1 | 959.83 |
| 12 | Ուլտրաձայնային նեբուլայզեր, DE Vilbiss Ultraneb | 1 | 988.43 |
| 13 | (Ուլտրաձայնային նեբուլայզեր, Ultraneb) բերանի ծայրադիր, միանվագ օգտ. | 80 | 112.00 |
| 14 | (Ուլտրաձայնային նեբուլայզեր, Ultraneb) անոթ 300մմ, ենթակա է ստերիլիզացման | 3 | 31.20 |
| 15 | (Ուլտրաձայնային նեբուլայզեր, Ultraneb) անոթ 1200մմ, ենթակա է ստերիլիզացման | 3 | 90.48 |
| 16 | (Ուլտրաձայնային նեբուլայզեր, Ultraneb) հակաբակտերիալ ֆիլտր | 75 | 1004.25 |
| 17 | (Ուլտրաձայնային նեբուլայզեր, Ultraneb) պուլվերիզացման միջնադիր սարք | 3 | 647.49 |
| 18 | (Ուլտրաձայնային նեբուլայզեր, Ultraneb) ապահովիչ T800mA 250V | 3 | 0.78 |
| 19 | (Ուլտրաձայնային նեբուլայզեր, Ultraneb) դեղերի համար նախատեսված խցիկ | 96 | 200.96 |
| 20 | (Ուլտրաձայնային նեբուլայզեր, Ultraneb) դիմակ մանկական | 50 | 42.56 |
| 21 | (արյան նմուշառման համակարգ) ասեղի կոմպլեկտ, թիթեռնիկաձև, s.u. 23 Գ (վակուտայներ) | 200 | 94.18 |
| 22 | Թուղթ, pH ինդիկատոր, 2-9 աստիճանավորում՝ 0.5, ստրիպ | 400 | 35.76 |
| 23 | (ավտոմատ կաթոցիչ 100-1000µl, Eppendorf) ծայրադիր, կապույտ | 1000 | 5.56 |
| 24 | (ավտոմատ կաթոցիչ 100-1000µl, Eppendorf) EMBOUTS (շտատիվ) | 96 | 3.61 |
| 25 | Կաթոցիչ, պլաստմասե, աստիճանավորված, 10մլ, 1/10 | 25 | 5.00 |
| 26 | Կաթոցիչ, փոխադրիչ, աստիճանավորված, պլաստմասե, ոչ ստերիլ | 500 | 12.23 |
| 27 | (Անոթ, 5մլ, տրամաչափ 13/15մմ) շտատիվ | 2 | 19.82 |
| 28 | Միկրոանոթ, կոնաձև հատակամասով, ամրացված կափարիչով, ստերիլ 2մլ | 1000 | 105.87 |
| 29 | Արկղ, 81 կրիոանոթների 1-2մլ համար նախատեսված | 3 | 23.67 |
| 30 | (Միկրոանոթ) տակդիր, 20 անոթ, 1.5մլ | 2 | 6.46 |
| 31 | (բազմանցք ավտոմատ կաթոցիչ 8) խցիկ, 100մլ | 5 | 6.35 |
| 32 | (Միկրոկաթոցիչ) արկղ 200µl ծայրադիրների համար, ստերիլիզացվող, 96 ծայրադիրներ | 10 | 308.60 |
| 33 | Միկրոանոթ կոնաձև հատակամասով, ամրացված կափարիչով, ստերիլ 1.5մլ | 1000 | 42.56 |
| 34 | EPPENDORF կաթոցիչ բազմանցք, 8 անցք, 30-300 µl | 1 | 647.13 |

5/11.15

| | | | |
|---|---|---|---|
| 35 | /Eppendorf կաթոցիչ, բազմանցք, 8 անցք/, ծայրադիրներ 20-300 µl | 1000 | 31.42 |
| 36 | /Ավտոմատ կաթոցիչ, 20-300 µl Eppendorf/, EMBOUT /շտատիվ/, ոչ ստերիլ | 192 | 62.84 |
| 37 | Կափարիչ, կարմիր | 500 | 13.99 |
| 38 | Կափարիչ, մանուշակագույն | 500 | 13.99 |
| 39 | Կափարիչ, մոխրագույն | 500 | 13.99 |
| 40 | Ակնոց, պաշտպանիչ, պլաստմասե | 2 | 9.34 |
| 41 | Ականջազննիչ գործիք (օտոսկոպ), հայոցեն + 4 հայելի | 2 | 88.20 |
| 42 | Միջնադիր սարք, 250մլ, դիմակներով (2 չափսի)+ բերանի ծայրադիր | 3 | 189.60 |
| 43 | (Միջնադիր սարք) բերանի ծայրադիր փականով | 10 | 24.37 |
| 44 | (Միջնադիր սարք), սիլիկոնե դիմակ, չափս՝ 1 | 5 | 122.45 |
| 45 | (VOERTEX միջնադիր սարքի) սիլիկոնե դիմակով, չափս՝ 2 | 5 | 122.45 |
| 46 | Ճնշման չափող սարք (sphygmomanometer) մեկ ձեռքի մանոմետր, կպչուն երիզ, մեծահասակների | 2 | 54.78 |
| 47 | Ճնշման չափող սարք (sphygmomanometer) մեկ ձեռքի մանոմետր, կպչուն երիզ, մանկական | 2 | 54.76 |
| 48 | Ստետոսկոպ, երկկողմանի, բժշկական | 2 | 20.60 |
| 49 | Ստետոսկոպ, երկկողմանի, փոքր երեխաների համար նախատեսված (Littman Classic II) | 2 | 151.58 |
| 50 | Ֆիլտր, շնչուղիների, 22M/15F, մեծահասակ/երեխաների, ստերիլ | 25 | 40.91 |
| 51 | Ֆիլտր, շնչուղիների, 15M/15F, նորածինների, ստերիլ | 25 | 56.41 |
| 52 | Միակցիչ, երկկոն, համաչափ, 7-11մմ տրամաչափ, ստերիլիզացման ենթակա | 20 | 4.80 |
| 53 | Թթվածնի դիմակ, մեծահասակների չափով, անոթով | 15 | 10.50 |
| 54 | Թթվածնի դիմակ, մանկական չափով, անոթով | 15 | 12.30 |
| 55 | Լորձահան սարք, նորածինների համար, միակցող անոթով | 150 | 131.16 |
| 56 | Ներարկիչ, 60մլ, կերակրման, կոնաձև ծայրադիր | 150 | 46.50 |
| 57 | Էլեկտրոնային ջերմաչափ, ճշգրտությունը՝ 0.1°C + տուփ | 3 | 5.19 |
| Ընդամենը | | | 18719.71 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**13 ապրիլի 2012 թվականի N Մ-276Ա**

# ԱՄՆ-Ի «ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՓ ԳՅՈՒՂԻ ԴՊՐՈՑԻՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 3-ի N 3/3.8-1/4159-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի ապրիլի 4-ի N 02/2034-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի ապրիլի 6-ի N 03/07-1/3425-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի 31-ի N ԱԱ/3-4/2775-12 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի ապրիլի 4-ի N 01/1386-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի «Հայ կրթական հիմնարկություն» Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մեսրոպ Մաշտոցի 13, ՀՎՀՀ՝ 01542952) իրականացվող՝ 3979520 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետափ գյուղի դպրոցին հարող տարածքում մարզադաշտի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով ԱՄՆ-ի «Հայ կրթական հիմնարկություն» Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Դիալոգ Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01533033) 2012 թվականի մարտի 25-ին կնքված N 2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի ապրիլի 12-ից մինչև մայիսի 25-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետափ գյուղի դպրոցին հարող տարածքում մարզադաշտի կառուցման աշխատանքների իրականացում՝ 3979520 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:



3. ԱՄՆ-ի «Հայ կրթական հիմնարկություն» Հայաստանի մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԱՄՆ «Հայ կրթական հիմնադրության» ՀՀ մասնաճյուղ կազմակերպության
Գործադիր տնօրեն `Ստեփան Նալբանդյան
«29» մարտ. 2012.թ.

# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

## ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ` ԳԵՏԱՓ ԳՅՈՒՂԻ ԴՊՐՈՑԻՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ՀՀ Շիրակի մարզի Գետափ գյուղի դպրոցին հարող տարածքում մարզադաշտի կառուցում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից:Համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի » 3-րդ կետի: |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ «Հայ Կրթական Հիմնադրություն » 600 West Broadway,Suite130, Glendale,CA 91204, (818)242-4154 |
| 4. | Ծրագիրը կատարողը | ԱՄՆ «Հայ Կրթական Հիմնադրություն » ՀՀ մասնաճյուղ (ՀՀ,քաղ. Երևան, Մաշտոցի պող.13շենք,ՀՎՀՀ 01542952) հեռ 53-14-85, 091498071բջ |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Շիրակի մարզի Գետափ գյուղի դպրոցը: Կրթության բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 3.979.520 ՀՀ.դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Շիրակի մարզի Գետափ գյուղի համայնքը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2012թ ապրիլի 12-ից մինչև 2012թ մայիսի 25-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ՀՀ Շիրնկի մարզի Գետափ գյուղի դպրոցին հարող տարածքի հարթեցում, բետոնյա եզրաքարերի իրականացում, նախատեսված տարածքի ամբողջական ասֆալտապատում, վոլեյբոլի և բասկետբոլի սյուների տեղադրում, կառուցված դաշտի ներկագծումներ և այլն: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | ՀՀ Շիրակի մարզի Գետափ գյուղի դպրոցի մարզադաշտը կառուցելու է «Դիալոգ Գրուպ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ01533033) որի նախահաշվայի արժեքը կազմում է` 3.979.520 (երեք միլիոն ինն հարյուր յոթանասունինն հազար հինգ հարյուր քսան)ՀՀ դրամ: Առանց ԱԱՀ 20%-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |



| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Կրթության և գիտության նախարարության և ՀՀ Շիրակի և մարզային կրթության վարչության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությաունն իրականացնելու է ԱՄՆ-ի Հայ կրթական հիմնարկության բարերարների խորհուրդը և ՀՀ -ում մասնաճյուղի տնօրինությունը, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային և ամփոփ հաշվետվություններ): |

ԱՄՆ «Հայ կրթական հիմնարկության» ՀՀ մասնաճյուղ կազմակերպության
Գործադիր տնօրեն `Ստեփան Նալբանդյան

«29» մարտ 2012թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**13 ապրիլի 2012 թվականի N Մ-27Ա**

**ԱՄՆ-Ի «ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ԱՐՑԱԽ» ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ ԵՐԿՈՒ ՀԱՐԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի 30-ի N 3/3.8-1/4131-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի ապրիլի 5-ի N 02/2083-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի 30-ի N ԱԱ/3-4/2776-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի «Հայ կրթական հիմնարկություն» Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մեսրոպ Մաշտոցի 13, ՀՎՀՀ՝ 01542952) իրականացվող՝ 29892044 դրամ ընդհանուր արժեքով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Արցախ» պետական համալսարանի հանրակացարանի երկու հարկի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով ԱՄՆ-ի «Հայ կրթական հիմնարկություն» Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ուրբանյունիթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00078998) 2012 թվականի մարտի 25-ին կնքված N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի ապրիլի 12-ից մինչև օգոստոսի 20-ը ընկած ժամանակահատվածում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Արցախ» պետական համալսարանի հանրակացարանի 2-րդ և 3-րդ հարկերի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 29892044 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:



3. ԱՄՆ-ի «Հայ կրթական հիմնարկություն» Հայաստանի մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԱՄՆ «Հայ կրթական հիմնադրության» ՀՀ մասնաճյուղ կազմակերպության
Գործադիր տնօրեն `Ստեփան Նալբանդյան
«29» մարտ 2012թ.

# Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

## ԼՂՀ «Արցախի Համալսարանի» Հանրակացարանի 2 հարկի վերանորոգում

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի «Արցախ Համալսարանի» հանրակացարանի 2 հարկի վերանորոգում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից:Համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի » 3-րդ կետի: |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ «Հայ Կրթական Հիմնարկություն »<br>600 West Broadway,Suite130, Glendale,CA 91204, (818)242-4154 |
| 4. | Ծրագիրը կատարողը | ԱՄՆ «Հայ Կրթական Հիմնարկություն » ՀՀ մասնաճյուղ<br>(ՀՀ,քաղ. Երևան, Մաշտոցի պող.13շենք,ՀՎՀՀ 01542952) հեռ 53-14-85, 091498071բջ |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի «Արցախ Համալսարան»:<br>Կրթության բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 29.892.044 ՀՀ.դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ԼՂՀ «Արցախ Համալսարանը», ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2012թ ապրիլ 12-ից մինչև 2012թ օգոստոս 20-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Հանրակացարանի 2 հարկերի (2-րդ և 3-րդ) ամբողջական վերանորոգում:<br>Պատշգամբներ, միջանցքներ, ննջարաններ, սան հանգույցներ, խոհանոցներ և ասիճանավանդակներ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի «Արցախ Համալսարանի» հանրակացարանի 2 հարկը վերանորոգելու է «Ուրբանյունիթ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 00078998) որի նախահաշվային արժեքը կազմում է՝ 29.892.044(քսանինն միլիոն ութ հարյուր իննսուներկու հազար քառասունչորս) ՀՀդրամ: Առանց ԱԱՀ 20%-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |

2

| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ Կրթության և գիտության նախարարության և «Արցախ Համալսարանի» ղեկավարության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացնելու է ԱՄՆ-ի Հայ կրթական հիմնարկության բարերարների խորհուրդը և ՀՀ -ում մասնաճյուղի տնօրինությունը, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային և ամփոփ հաշվետվություններ): |

ԱՄՆ «Հայ կրթական հիմնարկության» ՀՀ մասնաճյուղ կազմակերպության
Գործադիր տնօրեն `Ստեփան Նալբանդյան

«29» մարտ 2012թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**13 ապրիլի 2012 թվականի N Մ 278-Ա**

### «ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ 2012 – 2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼՈՒՅՍ՝ ՀԱՅԻ ԱՉՔԵՐԻՆ» (վեցերորդ փուլ) ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 6-ի N 3/3.8-1/4408-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի ապրիլի 2-ի N 02/1987-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի մարտի 30-ի N ՀՔ/22/2598-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի մարտի 28-ի N ՖԲ/ԱնՄ-5/2176-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի ապրիլի 2-ի N 03/07-1/3247-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի 28-ի N ԱԱ/3-4/2635-12 ու ապրիլի 10-ի N ԱԱ/3-4/3046-12 և Երևանի քաղաքապետի 2012 թվականի ապրիլի 2-ի N 02/34-15562-հ եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Վրացական 9, բն. 44, ՀՎՀՀ՝ 00074765) 2012 թվականի ապրիլից մինչև 2014 թվականի մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում իրականացվող՝ 300000000 դրամ ընդհանուր արժեքով «Լույս՝ հայի աչքերին» (վեցերորդ փուլ) ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Լիկվոր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01201697) 2012 թվականի մարտի 1-ին կնքված՝ N 2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի ապրիլի 1-ից մինչև 2014 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում բժշկական սարքավորումների և դեղորայքի ձեռքբերում՝ 2000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05507136) 2012 թվականի փետրվարի 20-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի փետրվարի 20-ից մինչև 2014 թվականի փետրվարի 20-ն ընկած ժամանակահատվածում բժշկական պարագաների և դեղորայքի ձեռքբերում՝ 3000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.



3) «Ֆարմատեք» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01818051) 2012 թվականի մարտի 15-ին կնքված՝ N ՀԿՆ 15-03 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի ապրիլի 1-ից մինչև 2014 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում բժշկական պարագաների և դեղորայքի ձեռքբերում՝ 1000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Լիոն Փրինթինգ Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01829254) 2012 թվականի մարտի 1-ին կնքված՝ N 2012/1 պայմանագրում նշված գործարքները, որոնցով նախատեսվում են ընդհանուր հետազոտության հարցաթերթիկների և նյութերի տպագրում՝ 500000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի և հանրակրթական նյութերի տպագրում՝ բրոշյուր, պաստառ, ձեռնարկներ՝ 500000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Մեգամեդ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01552095) 2011 թվականի նոյեմբերի 1-ին կնքված՝ N 30 պայմանագրում (հավելված N 1) նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2012 թվականի ապրիլի 1-ից մինչև 2014 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում հիմնադրամի գրասենյակի «Ինտերնետ» ցանցի ծառայությունների մատուցում՝ 600000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի և ակնաբուժական կրթական կենտրոնի գրադարանի «Ինտերնետ» ցանցի ծառայությունների մատուցում՝ 600000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Փաբլիսիս Հեպտա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00100064) 2012 թվականի ապրիլի 1-ին կնքված՝ գովազդային և մարքեթինգային ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հանրակրթական ֆիլմերի և իրազեկման հոլովակների նկարահանման ծառայությունների մատուցում՝ 2000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Մաստերկոմպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01566751) 2009 թվականի օգոստոսի 1-ին կնքված՝ N MCS04/2009 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային տեխնիկայի վերանորոգման և սպասարկման ծառայությունների մատուցում՝ 720000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի

8) «ԱրմենՏել» ՀՁ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2003 թվականի հունիսի 19-ին կնքված՝ N 281773,790,792, 2004 թվականի մայիսի 27-ին կնքված՝ N 47763, 2005 թվականի ապրիլի 15-ին կնքված՝ N 010510380 և դեկտեմբերի 29-ին կնքված՝ N 289257 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2012 թվականի ապրիլի 1-ից մինչև 2014 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում բջջային հեռախոսակապի և հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 3000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2009 թվականի ապրիլի 16-ին կնքված՝ N 07-0098-7 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի ապրիլի 1-ից մինչև 2014 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում գրասենյակի ջրամատակարարում՝ 150000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

10) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2008 թվականի փետրվարի 1-ին կնքված՝ N3-015.02.08.6176 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի ապրիլի 1-ից մինչև 2014 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում հիմնադրամի գրասենյակի գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 2000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

11) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Արևմուտք» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի հունվարի 24-ին կնքված՝ N 6303 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի ապրիլի 1-ից մինչև 2014 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 1000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3. «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին ու Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

*«Հայկական Ակնաբուժական Նախագիծ» Բարեգործական հիմնադրամ»* կազմակերպության

նախագահ *Հայաստանյան գրասենյակի տնօրեն* ՝ *Ն. Եղիազարյանի* կողմից

«06» ապրիլ 2012..թ

**«ԼՈՒՅՍ ՀԱՅԻ ԱՉՔԵՐԻՆ» ծրագիր / VI – վեցերորդ/ ՓՈՒԼ**

**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | • Նվազեցնել ձեռք բերովի կուրությունը բնակչության շրջանում:<br>• Հասանելի և մատչելի դարձնել ակնաբուժական ծառայությունները և բուժօգնությունը, աշխարհագրական տեսանկյունից կարիքավոր ծերերին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին, հաշմանդամներին:<br>• Բարելավել ծառայությունների որակն ակնաբուժության բնագավառում՝ ստեղծել ինտերնետային դասընթացներ և թեստեր ի շարունակություն անցկացրած վերապատրաստման դասընթացների տեղական ակնաբույժների, ակնաբուժական բուժքույրերի, ընտանեկան բժիշկների, բուժքույրերի և բուժականեկարժական կետերի աշխատողների համար:<br>• Օժանդակել բնակչության շրջանում ակնային հիվանդությունների, բուժման և կանխարգելիչ միջոցառումների անհրաժեշտության մասին տեղեկատվության տարածմանը և իրազեկության բարձրացմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական ուղղման նպատակը | Նախատեսում ենք ծրագրի շրջանակներում՝ օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Հիմնադրամի ծրագրի ֆինանսավորման հիմնական աղբյուրն է ԱՄՆ-ում գտնվող «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական ընկերությունը (The Armenian Eye Care Project Corporation) ՝ որը հանդիսանում Հայկական ակնաբուժության նախագիծ ԲՀ- ի հիմնադիրը: 2012 թ. Բուժօգնության ծրագիրը համաֆինանսավորվում նաև Օրանժ հիմնադրամի կողմից: |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայկական Ակնաբուժության Նախագիծ» բարեգործական հիմնադրամը, ՀՎՀՀ՝ 00074765, իրավաբանական հասցե՝ Վրացական 9, բն. 44, իրական հասցե՝ Այգեստան, 5-րդ փ., 7-րդ տուն հեռ.: 55 90 68; 577611: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն առնչվում է առողջապահական և սոցիալական ոլորտներին և ընդգրկում է Արմավիրի, Սյունիքի, Կոտայքի, Տավուշի, Վայոց Ձորի, Շիրակի, Լոռու և Արարատի մարզերը, Երևան քաղաքի սոցիալական հաստատությունները, Երևանի և մարզերի ծննդատների ինտենսիվ թերապիայի բաժանմունքները: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր կողմնորոշիչ արժեքը՝ 300,000,000 ՀՀ դրամ |

| եռամսյակ | ա/հետազոտություն/բուժում/վիրահատություն | բ/մասնագիտական վերապատրաստում | գ/հանրային իրազեկություն/տեղեկատվություն | Վարչական ծախսեր | ԸՆԴՀԱՆՈՒՐԸ |
|---|---|---|---|---|---|
| 2012 | | | | | |
| Ապրիլ-հունիս | 36,180,000 | 2,700,000 | 5,400,000 | 9,720,000 | **54,000,000** |
| հուլիս-սեպտեմբեր | 34,170,000 | 2,550,000 | 5,100,000 | 9,180,000 | **51,000,000** |
| հոկտեմբեր-դեկտեմբեր | 20,100,000 | 1,500,000 | 3,000,000 | 5,400,000 | **30,000,000** |
| **ընդամենը 2012** | **90,450,000** | **6,750,000** | **13,500,000** | **24,300,000** | **135,000,000** |
| *ծախսեր՝ որոնց համար հայցվում է ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում* | 20,025,000 | 1,395,000 | 2,925,000 | 3,361,500 | **27,706,500** |
| ծախսեր՝ որոնց համար չի հայցվում է ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում | 70,425,000 | 5,355,000 | 10,575,000 | 20,938,500 | **107,293,500** |
| 2013 | | | | | |
| հունվար-մարտ | 10,050,000 | 750,000 | 1,500,000 | 2,700,000 | **15,000,000** |
| Ապրիլ-հունիս | 36,180,000 | 2,700,000 | 5,400,000 | 9,720,000 | **54,000,000** |
| հուլիս-սեպտեմբեր | 34,170,000 | 2,550,000 | 5,100,000 | 9,180,000 | **51,000,000** |
| հոկտեմբեր-դեկտեմբեր | 20,100,000 | 1,500,000 | 3,000,000 | 5,400,000 | **30,000,000** |
| **ընդամենը 2013** | **100,500,000** | **7,500,000** | **15,000,000** | **27,000,000** | **150,000,000** |
| *ծախսեր՝ որոնց համար հայցվում է ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում* | 22,250,000 | 1,550,000 | 3,250,000 | 3,735,000 | **30,785,000** |
| ծախսեր՝ որոնց համար չի հայցվում է ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում | 78,250,000 | 5,950,000 | 11,750,000 | 23,265,000 | **119,215,000** |
| 2014 | | | | | |
| հունվար-մարտ | 10,050,000 | 750,000 | 1,500,000 | 2,700,000 | **15,000,000** |
| **ընդամենը 2014** | **10,050,000** | **750,000** | **1,500,000** | **2,700,000** | **15,000,000** |
| *ծախսեր՝ որոնց համար հայցվում է ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում* | 2,225,000 | 155,000 | 325,000 | 373,500 | **3,078,500** |
| ծախսեր՝ որոնց համար չի հայցվում է ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում | 7,825,000 | 595,000 | 1,175,000 | 2,326,500 | **11,921,500** |
| **Ծրագրի ամբողջ գումարը** | **201,000,000** | **15,000,000** | **30,000,000** | **54,000,000** | **300,000,000** |



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| *ծախսեր՝ որոնց համար հայցվում է ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում* | 44,500,000 | 3,100,000 | 6,500,000 | 7,470,000 | **61,570,000** |
| ծախսեր՝ որոնց համար չի հայցվում է ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում | 156,500,000 | 11,900,000 | 23,500,000 | 46,530,000 | **238,430,000** |

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ մարզերի և Երևանի բնակչությունը՝ աղքատ, անապահով ընտանիքները /ըստ ընտանեկան նպաստների համակարգի սահմանային մեծությունից սկսած [30 միավոր]/, երեխաները, թոշակառուները, հաշմանդամները, զոհված ազատամարտիկների ընտանիքները, անհաս նորածին երեխաները, որոնց սպառնում է անհասության ռետինոպաթիայի /ԱՌ/ պատճառով առաջացած կուրության վտանգը: Ընդհանուր ակնային հետազոտությունների դեպքում – ստուգվում են բոլոր նրանք, ովքեր որոշում են գալ անվճար ստուգման: Վիրահատության ենթակա անձանց պետպատվերից օգտվելու իրավասությունը ստուգվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած ընտանեկան անապահովության ցուցակների միջոցով՝ մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների հետ միասին: ՀԱՆ-ի շահառուներն են. ընդհանուր հետազոտությունների դեպքում՝ 15000 մարդ /ներառյալ 3000 երեխա/; բուժման/վիրահատության դեպքում՝ 1500 մարդ, ակնոցների տրամադրման դեպքում՝ 5000 մարդ, անհաս երեխաների հետազոտության և բուժման/ԱՌ/ դեպքում է՝ 500 հոգի, ընդամենը 22000 մարդ: Ակնային հիվանդությունների, բուժման և կանխարգելիչ միջոցառումների տեղեկատվության և իրազեկության շահառուների թիվը կես միլիոն մարդ է: Մասնագիտական կրթական ծրագրի շահառուներն են 150 բուժաշխատող: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրն իրականացվելու է **2012 թ. ապրիլ -2014 թ. մարտ** ժամանակաշրջանի ընթացքում: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի նախատեսված բոլոր միջոցառումները անվճար են, դրանք են:<br>**(ա)** կանխարգելում/հետազոտություն/բուժում/վիրահատություն/ակնոցների տրամադրում: Այս բաղադրիչի համար նախատեսվում է ընդամենը **201,000,000.00** ՀՀ դրամ,<br>**(բ)** մասնագիտական վերապատրաստում/դասընթացներ, որոնց համար նախատեսվում է **15,000,000** ՀՀ դրամ, և<br>**(գ)** հանրային իրազեկություն/տեղեկատվություն, կրթություն, որի համար նախատեսվում է **30,000,000** ՀՀ դրամ:<br>Ծրագրի բաղադրիչները իրականացվում են ՀՀ տարածքում ըստ հետևյալ ժամանակացույցի՝ Արարատ (ապրիլ-մայիս, 2012) Վայոց Ձոր (հունիս 2012), Սյունիք (հուլիս-օգոստոս, 2012), Արմավիր (սեպտեմբեր -նոյեմբեր, 2012), Կոտայք (մարտ-մայիս, 2013), Տավուշ (մայիս 2013), Շիրակ (հուլիս- օգոստոս, 2013), Լոռի (սեպտեմբեր -նոյեմբեր 2013), Երևան (սոցիալական հաստատություններ-2012, 2013, 2014): Ակնային ընդհանուր զննումներ իրականացվելու են նաև դպրոցներում: *Աչքի շարժական հիվանդանոցը* (ԱՇՀ) շրջելու է մարզերով և կատարելու տեսողության բուժում և վիրահատություն՝ հիմնված ընդհանուր ակնային հետազոտությունների արդյունքների վրա: Անհասության ռետինոպաթիայի /ԱՌ/ ծրագրի աշխատանքները կատարվում են ընտրված ծննդատներում շուրջ տարի: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող | ՀԱՆ ԲՀ «Լույս հայի աչքերին» ծրագրի ընդհանուր կողմնորոշիչ արժեքն է՝ **300,000,000 ՀՀ դրամ:** Վարչական ծախսերը ծրագրի ընդհանուր արժեքի 20 տոկոսը չեն գերազանցում:<br>Ծրագրի շրջանակներում նախատեսված գործարքները<br>ա/կանխարգելում/հետազոտություն/բուժում/վիրահատություն/ակնոցների տրամադրում<br>• Ակնաբուժական և բժշկական սարքավորումների, դեղորայքի ներմուծում՝ կողմնորոշիչ արժեքը **33,000,000** ՀՀ դրամ առանց ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ):<br>• Ակնաբուժական/բժշկական սարքավորումների և դեղորայքի գնում՝ արժեքը **2,000,000** ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի, ըստ մարտի 1, 2012թ-ին կնքված համար 2 պայմանագրի **«Լիկվոր»** ՓԲԸ (ք. Երևան, Մարկարյան փ. 6, ՀՎՀՀ 01201697): |

(ընդհանուր համար ըստ նոր համակարգի 113293093) **Արմենթելի** ( ք. Երևան, ՀՎՀՀ 02500052) հետ, ընդհանուր արժեքը՝ **3,000,000 ՀՀ** դրամ առանց ԱԱՀ-ի:

- ՀԱՆ-ի գրասենյակի ջրամատակարարում՝ **150,000 ՀՀ** դրամ առանց ԱԱՀ-ի ըստ Երևանի "**Երևան Ջուր** " ՓԲԸ –ի հետ 2009 թ. ապրիլի 4 ին կնքված 07-098-7 պայմանագրի (ք. Երևան, Արովյան 66 ա ՀՎՀՀ 01555351):
- ՀԱՆ -ի գրասենյակի գազամատակարարում՝ **2,000,000 ՀՀ** դրամ առանց ԱԱՀ-ի ըստ "**ՀայՌուսգազարդ**" ՓԲԸ –ի Երևանի գզմ-ի հետ 2008 թ. փետրվարի 2- ին կնքված պայմանագրի N. 3.015.02.08.6176 (ք. Երևան, Չարենցի 141ա ՀՎՀՀ 0004631):
- ՀԱՆ -ի գրասենյակի Էլեկտրաէներգիայի մատակարարում՝ **1,000,000 ՀՀ** դրամ առանց ԱԱՀ-ի ըստ "**Հայաստանի Էլեկտրական ցանցեր**" ՓԲԸ-ի "Արևմուտք" մասնաճյուղի հետ 2008 թ. հունվարի 24 ին կնքված N 6303 պայմանագրի (ք. Երևան, 015205882, Արշակունյաց 17ա ՀՎՀՀ 015205882):

Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերի ընդհանուր արժեքն է՝ **54,000,000 ՀՀ** դրամ:
Ստորև ներկայացված է այս բաղադրիչի ընդհանուր պատկերը՝ ներառյալ այն ծախսերը որոնց համար հայցվում են հարկային և մաքսային արտոնություններ /տես վերոնշվածը/, ինչպես նաև այն ծախսերը, որոնց համար չեն հայցվում այդ արտոնությունները:

| | |
|---|---|
| Ինտերնետային կաբելային կապի ապահովում և տեխնիկական սպասարկում | 600 000 |
| Համակարգչային տեխնիկայի վերանորոգման և սպասարկման ծառայություն | 720 000 |
| Հեռախոսային կապ՝ | 3 000 000 |
| ՀԱՆ-ի գրասենյակի ջրամատակարարում | 150 000 |
| ՀԱՆ -ի գրասենյակի գազամատակարարում | 2 000 000 |
| ՀԱՆ -ի գրասենյակի Էլեկտրաէներգիայի մատակարարում | 1 000 000 |
| **ծախսեր՝ որոնց համար հայցվում է ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում** | **7 470 000** |
| անձնակազմի աշխատավարձ | 35 000 000 |
| հաշվապահական ծառայություն | 4 500 000 |
| աուդիտ | 2 500 000 |
| գրասենյակային պարագաներ | 2 000 000 |
| չնախատեսված ծախսեր | 2 530 000 |
| **ծախսեր՝ որոնց համար չի հայցվում ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում** | **46 530 000** |

| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում ՀԱՆ-ը համագործակցում է ՀՀ առողջապահության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ ԿԲԾՀՀ, միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ: ՀՀ առողջապահության նախարարությունը համակարգում է ծրագիրը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տրամադրում է անապահով ընտանիքների ցուցակները: Աշխատանքները սկսելուց առաջ և ընթացքում, ՀԱՆ-ը համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանների հետ՝ բնակչությանը ծրագրի պայմաններին իրազեկելու, ժամանակացույցը կազմելու, ակնաբուժական գործունեություն իրականացնելու, դպրոցներում ակնային ստուգումներ և ակնային առողջության դասընթացներ անցկացնելու, շահառուների ցուցակները վերստուգելու, տվյալներ և տեղեկատվություն տարածելու համար: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է «Հայկական Ակնաբուժության Նախագիծ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի, անհատ բարերարների, ՀՀ ԿԲԾՀՀ, ՀՀ առողջապահության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների կողմից: Ամսական հաշվետվություններ ներկայացվում են էլ-փոստով հիմնադիր բարերարին, եռամսյակային հաշվետվություններ՝ ՀՀ ԿԲԾՀՀ համաձայնողովին: Մարզում ծրագիրը ավարտելուց հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ առողջապահության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններին, և համապատասխան մարզպետարաններին: |